

391a  
1050-2

Պ. ԳՐԱԲՈՎ


ԲԱՏՐԱԿԻ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ—1929

1900-1920  
1900-1920  
1900-1920




Գ. ԳՐԱԲՈՒ

321.914.2



ԲԱՏՐԱԿԻ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

16095  
A 4393



ԳԵՏԱԿՈՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1929

ԹԵՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԱՆ

ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Հր. № 902 Պ. № 1660

Տիրաժ 3.000

Գրառեպլվար № 1594 ր.



## Ի՞նչ է ԲԱՏՐԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱ- ՆԱԳԻՐԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԿՆՔԵԼ ԱՅՆ

Վարձվողի և վարձողի միջև կայացած հա-  
մաձայնությունը վարձվելու պայմանների մա-  
սին—կոչվում ե աշխատանքի պայմանագիր:  
Յերբ բատրակը կամ բատրակուհին վարձվում  
են գյուղացու մոտ աշխատելու, նրանք համա-  
ձայնության են զալիս վարձողի հետ, թե ինչ  
աշխատանքի համար են վարձվում, ինչ աշխա-  
տավարձով, ինչպես և վարձվելու մյուս բոլոր  
պայմանների մասին: Ահա հենց բատրակի կամ  
բատրակուի յեվ վարձող գյուղացու սիցեվ  
կայացած այս համաձայնությունն ել կոչվում  
է բատրակի աշխատանքային պայմանագիր:

Գյուղացիական տնտեսություններում ո-  
ժանդակ վարձու աշխատանք ոգտագործելու  
մասին հրատարակված «Ժամանակոր կանոն-  
ներ» ի համաձայն (հոդվ. Հ) բատրակի աշխա-  
տանքի պայմանագիրը պետք է անպայման գրա-  
վոր լինի: Ինչու յե որենքը պահանջում, վոր  
բատրակի աշխատանքի պայմանագիրն անպատ-  
ճառ գրավոր լինի: Վորովհետև, յեթե համաձայ-

նությունը լինի վոչ թե գրավոր, այլ բանավոր, բերանացի, մի վեճ ծագած դեպքում վոչ բատրակը և վոչ ել վարձողը չեն կարող ապացուցել իրենց ասածի ճշտությունը, այսինքն՝ չեն կարող հաստատել, թե վարձվելու և վարձելու ժամանակ ինչ համաձայնության են լեկել։ Բանավոր—բերանացի համաձայնության դեպքում միշտ ել կարող են թյուրիմացություններ ծագել բատրակի և վարձողի միջև։ Բանավոր համաձայնության դեպքում բատրակը լեզրեք չի կարող հանգիստ լինել. շարունակ ահը սրտումը կլինի, թե չինի վարձողը իրեն խարի, իր աշխատավարձը լրիվ չտա, կամ հենց առանց մի բան վճարելու դուրս անի։ Աշխատանքի գրավոր պայմանագիրը շատ ավելի ապահով ե թե բատրակի և թե վարձողի համար։ Զուր չե, վորուսական առածն ասում ե։ «Այն ինչ վոր գրված ե գրչով, կացնով ել ջնջել չես կարող»։

Վարձողի յեվ բատրակի միջեվ բանավոր համաձայնուրյուն որենինվ բոլլատրվուս և միայն այն դեպքում (հրահանգ «Ժամանակավոր կանոնների» մասին հոդվ. 2), յերբ զյուղացին բատրակին կամ բատրակունուն վարձում և կարէ ժամանակով, յերկու շաբաթից վոչ ավել տեվող աշխատանքի համար։ Ցեթե գյուղացին բատրակին կամ բատրակունուն տարվա մեջ միքանի

անգամ վարձում եւ կարճատեւ աշխատանքների համար, որինակ՝ խոտհարքի, հնձի կամ այլ աշխատանքների համար, ապա որենքով թուղարվում եւ վարձելու մասին բանավոր պայմանագորվել միայն այն դեպքում, իեթե բատրակը կամ բատրակուհին ամբողջ տարվա ընթացքում մի ամսից ավելի չի աշխատում նրա ժոտ։ Ինչու յեւ որենքը թույլ տալիս այդպիսի դեպքում բանավոր համաձայնության գալ։ Վորովինետեւ մի կամ միքանի որով վարձելիս սովորաբար վարձելու պայմանները պարզ են լինում և միքանի որվա ընթացքում չեն մոռանա վոչ բատրակը և վոչ վարձողը։ Թեև որենքը թույլ եւ տալիս, վոր այսպիսի կարճատեւ աշխատանքների համար բանավոր համաձայնությամբ բատրակ վարձեն, սակայն չի ել արգելում, վոր այդպիսի դեպքերումն ել պայմանագիրը գրավոր կազմեն։ Յեթե բատրակն ու վարձողը ցանկանում են, կարելի յեւ գրավոր աշխատանքի պայմանագիր կնքել և կարճատեւ աշխատանքների վարձելու ժամանակ՝ որինակ՝ մեկ յերկու շաբաթով։

Աշխատանքային պայմանագիրը բարակի ու բարեկուհու գրուրյունը չպիտի վատացնի ուենթում նախատեսված պայմաններից

Ինչպես զրավոր աշխատանքալին պայմանագրով, այնպիս ել բանավոր համաձայնությամբ

չի կարելի այնպիսի պայմաններ սահմանել, վորոնք վատացնեն բատրակի կամ բատրակունու դրությունը որենքով սահմանված կանոններից ու պայմաններից Այն աշխատանքի պայմանագիրը վորի պայմանները բատրակի կամ բատրակունու դրությունը վատացնում են որենքով սահմանած պայմաններից, արդպիսի պայմանգրերը հաւարվ ևմ են չեղալ անուժ («Ժամանակավոր կանոնների» 2-րդ հոդված):

Այն դեպքերում, յերբ աշխատանքի պայմանագրում դովծ կլինեն այնպիսի կետեր, վորոնք վարձվողի դրությունը վատացնում են որենքով սահմանած պայմաններից, արդպիսի պայմանները կհամարվեն չեղյալ անուժ և վարձողը կպարտավորվի կատարել որենքում սահմանած կարգերը և վոչ թե այն, ինչ վոր զրված եւ աշխատանքի պայմանագրում վարձվողի դրությունը վատ ցնող պայմանագիրը չեղյալ են համարվում նաև այն դեպքերում, եթե նոյնիսկ դրանք աշխատանքի պայմանագրում զրված են վարձվողի հ մածանութիւմք: Որինակ՝ յեթե աշխատանքի պայմանագրու ժաշխատավարձը ավելի քիչ և զրված, քան թե ավլալ տեղի պետական սինիմումն ե\*), վարձողը պետք է վճարի

\* ) Աշխատավարձի պետական մինիմումի մասին մահրաման գրված ե այս գրքի «Աշխատավարձը բաժնում:

վարձվողին վոչ թե այս, ինչ գրված ե պարմա  
նազրում, այլ՝ համաձայն որենքի:

Ալսպես ուրեմն, աշխատանքի պարմանազիրը  
չի կարող վարձվողի գրությունը որենքով սահ-  
մանված պայմաններից վատացնել:

Լավ, բայց աշխատանքի պայմանազրում  
կարելի յե ավելի լավ պայմաններ մշակել վարձ-  
վողի համար քան թե որենքով սահմանված եւ —  
Այս, կարելի յե Խորհրդային որ նքները վարձու  
աշխատանքի մասին սահմանում են սիայն վարձ  
վողի աշխատանքն ու իրավունք երը պաշտպա-  
նող ամե աանհրաժեշտ պայմանները, ա սիսքն  
այնպիսի պամաններ, վորից վատ և վորից քիչ  
պայմանն ըսկ վարձողները չեն կարող բառ տի  
էամ բառակուհի վաճել Ազդաւոն անհրաժեշ-  
տպայմաններն ել կոչվում են որւնսդական մի  
նիմում:

Գործար աններում ու ֆարբիկաներու որենա-  
զրական մինիմումը սահմանվում ե Աշխա-  
տանքի Որենսգրքով: Ոժանդակ վարձու աշխա-  
տանք ոգտագործող գյուղացիական տնտեսու-  
թյուններում այդպիսի որենսգրական մինիմում  
են համարվում գյուղացիական տնտեսություն-  
ներում ոժանդակ վարձու աշխատանք ոգտա-  
գործելու մասին հրատարակված ռժամանակա  
վոր կանոնները: Արդյունաբերական տիպի

գյուղացիական անտեսություններում որենսդրական մինիմում են համարվում խորհրդային տընտեսություններում գործող աշխատանքի որենքները, այսինքն՝ նույն Աշխատանքի Որենսդրաբար, բայց այնպիսի փոփոխություններով, վորոնք հարմարեցնում են զյուղատնտեսական աշխատանքներին։ «Ժամանակավոր կանոնների» մասին հրատարակված հրահանգի մեջ, վորը հաստատված է Ռ.Խ.Ս.Ֆ.Հ ժողովրդական կոմիսարների խորհրդի կողմից, (հոդվ. 2) այս մասին ուղղակի ասված եւ,

«Արինական են նաև վարչությունները (աշխատանիքի պայմանագրեր) վորոնք բառակի կամ բառակութու գրությունն ավելի յեն լավացնում, բան նախատեսնված է «Ժամանակակիցոր կանոններում յեկ սույն հրահանգի մեջ»։ Յեկ ուրիշ կերպ եւ լինել չի կարող, վորովհեաև «Ժամանակավոր կանոններով» վարձողների համար միայն այնպիսի կանոններ ու պարտականություններ են սահմանվում, վորոնք կարող են կատարել և պիտի կատարեն բառակ կամ բառակուհի վարձող բոլոր զյուղացիները՝ անկախ վարձողի կարողությունից ու տնտեսության չափից։ Ահա թե ինչու աշխատանքի պայմանագրով չեն կարող ավելի վատ պայմաններ սահմանվել, վորոնք

ավելի ցած լինեն որենքով սահմանած պարման-  
ներից։ Բայց աշխատանիքի պայմանագրում կա-  
րող են այնպիսի պայմաններ նախատեսնվել,  
վորոնիք ավելի լավացնեն բարեկի կամ բա-  
րակութու դրույտնը, բայց թե որենինվ սահ-  
մանված է։

Ի՞նչ գեղինում պիտի աշխատել աշխատանիքի պայմա-  
նագրում ավելի լավ պայմաններ մօռկել,  
բայց թե որենինումն ե նախատեսնված

Յերբ և վորտեղ կարելի յե այդպիսի բա-  
րելափում։ Դա կարելի յե, ամենից առաջ, հա-  
րուստ զյուղացիական տնտեսություններում,  
վորոնք կարող են և պետք ե բարերակին ու  
բարերակուհուն ավելի բարձր աշխատավարձ տան  
և ավելի լավ պայմաններում պահեն, քան թե  
սակավուժ զյուղացիական տնտեսությունները։  
Սխալ կլիներ աշխատանքի պայմանագրով միե-  
նույն պայմանները պահանջել թե հարուստ և  
թե չունեոր զյուղացիական տնտեսություն-  
ներում։

Աշխատանքի պայմանագրեր կնքելիս հատ-  
կապես պես և առանձնացնել արդյունաբերա-  
կան տիպի զյուղացիական տնտեսությունները,  
վորովինետև այդ տնտեսությունների վրա տա-  
րածվում ե վոչ թե «Ժամանակավոր կանոնները»,  
այլ «Աշխատանքի որենսգիրքը»։

Վորոնք են ալդ տնտեսությունները։

Դրանք գլխավորապես գյուղացիական այն շահագործող տնտեսություններն են, վորտեղ տնտեսության աշխատանքները տարվում են գյուղագորապես վարձու բանվորների բատրակների ու բատրակուհիների միջոցով։ Կարող եւ պատահել, վոր աւղափսի զյուղացին կան տնտեսություններում աշխատեն նաև իւրը տերը կամ նրա ըստանիքի նդամները, սա կայն տնտեսության մեջ նրանց աշխատանքը հիմն կան աշխատանքը չե։ Արդյունաբերական տիպի գյուղացիական բատրակների աշխատանին ե։ Ամենից առաջ արդյունաբերական տիպի տնտեսություն ալ տի համարել այն գյուղացիական տնտեսությունները, վորոնք ունեն յեկամտաքեր արդյունաբերական տեխնիկական ձեռնարկություններ։ — Ջրաղացներ, ձիթահանքներ և ալին։ Ն ոյն շարքին պիտի դասել նաև առետր կանների, չարչիների, վաշխառուների, միջնորդ առետրականների տնտեսությունները և այն գյուղացիական տնտեսությունները, վորոնք շահագործման նպատակով շարունակաբար գյուղի բնակչությանն են տալիս ոգտագործելու գյուղատնտեսական մեքենաներ—տրակտորներ, հնձող կամ կասող մեքենաներ և այլն, Արդյունաբերական տիպի տըն-

տեսություն պիտի համարել նաև այն գյուղացին կան տնտեսությունները վորոնք իրենց ուժի դրամական և կարողությամբ (վարելահողի, անասունների գյուղատնտեսական ինվենտարի և դրամական և իջացների շատություն) խիստ կերպ զարքերվում են տփ ալ աեղի գյուղացիան անտեսությունների ընդհանուր մակարդակից։ Նահանգային գործկոմների պարտադիր վորոշումներում ավելի ճիշտ ու մանրամասն ցուցմունքներ եւ տփած այն մասին, թե վորոնք են համարվում արտադրական տիպի գույղացիական տնտեսություններ, վորոնց վահեն տարածվում «ոժանդակ վարձու աշխատանիկ ոգտագործելու մասին նրատարակված «Ժամանակավոր կանոն ներ»։ Այդպիսի պարունակիր վորոշումներ այժմ հրատակական են մի շարք նահանգներում ու մարդերում։ Շրջայնացման յենթարկված տեղերում յերբեմն այդպիսի վորոշումներ հրս տարակում են նաև բջանային գործկոմները։ Ախտանիվի պայմ նագրեր կնքելիս հենց այդ վորոշումներով ել պիտի ղեկավարվել։

Ժամանակավոր կանոնները յեզ Աշխատանիվ  
Որենսգիրքը

Վորոնք եւ «Աշխատանիվ Որենսգրքի» և «Ժամանակավոր կանոնների» հիմնական տարքերու-

թյունը։ Գյուղացիական տնտեսություններում վարձու ոժանդակ աշխատանք ոգտագործելու մասին հրատարակած «Ժամանակավոր կանոններով» մի շաբթ արտոնություններ եւ արվում վարձողներին, վոր «Աշխատանքի Որենսգրքում» չկան։ Այսպես որինակ՝ «Ժամանակավոր կանոններով» թույլ եւ արվում, վոր մի շաբթ պայմաններ վորոշվեն վարձողի ու վարձվողի համաձայնությամբ։ Վերցնենք հենց հետեւյալ որինակները. — բանվորական որվա տեսդությունը, աշխատավարձի վճարման ժամկետները, բանվորական հագուստ ու կոշիկ տալը, հանգստի որերին աշխատելու համար արվող վարձի չափը և մի շաբթ ուրիշ պայմաններ վորոշվում են յերկուսի համաձայնությամբ։

Խորհրդային իշխանությունն այս արտոնությունները տալիս եւ միջակ և չունեոր գյուղացիական տնտեսություններին, վորոնք բատրակ կամ բատրակուհի յեն վարձում վոչ թե իրենց տռուզ լինելուց և հարստություն զիզելու նպատակով, այլ տնտեսության կարիքն եւ ստիպում։ Խորհրդային իշխանությունը գիտի, վոր ալդպիսի գյուղացիական տնտեսությունների համար «Աշխատանքի Որենսգրքի» որենքներն անհարմար են, նրանց ուժից վեր են։ Դրա համար ել ալդպիսի տնտեսությունների համար Խորհրդային

Իշխանությունը հրատարակել ե «Ռժամանդակ վարձու աշխատանք ոգտագործելու ժամանակավոր կանոնները»:

Այնինչ «Աշխատանքի Որենսգրքով» սահմանված ե վորուսկի բանվորական որ. - հասակավորների համար որական 8 ժամ, 16.ից—18 տարեկան անչափահամների համար 6 ժամ, և 14 ից—16 տարեկան փոքրահասակների համար—4 ժամ: Համաձայն Որենսգրքի՝ բանվորի աշխատավարձը պետք ե տրվի ամսական ամենաքիչը յերկու անգամ: Վարձողը պարտավոր ե բանվորին ամսագիտական հագուստ, կոշիկ տալ այն չափով, ինչ վոր հաստատված ե Աշխատանքի Կոմիսարիատի կողմից: Որենսգրքի համաձայն արտաժամյա աշխատանքի համար, այսինքն որվամեջ սահմանված ժամերից ավելի աշխատելու համար վարձողը պարտավոր ե ավելի վճարել բանվորին, քան թե «Ժամանակավոր կանոններն» են պահանջում. առաջին 2 ժամի համար պիտի վճարի մեկ ու կես անգամ ավելի սովորական չափոց, իսկ հետեւյալ ամեն մի ժամի համար 2 անգամ ավելի: Հանգստի որերին և տոն որերին աշխատելու համար ել որենսգրքով վարձողը պարտավոր ե կըկնակի չափով վճարել: Իսկ «Ժամանակավոր կանոններով» այս բալոր պայմանները վորուստում են յերկուսի համաձայնությամբ:

Հետո - «Ժամանակավոր կանոնները» թույլ  
են տալիս փոքրահասակներին աշխատեցնել 12  
տարեկանից սկսած, իսկ Որենսգիրքը՝ միայն  
14 տարեկանից։ Համաձայն Որենսգրքի վարձողը  
պարտավոր ե ապահովագրել իր բոլոր բանվոր-  
ներին - թե մշտականներին, թե ժամանակավոր-  
ներին և թե սեզոնալիններին, և մշտական բան-  
վորների համար վարձողը ապահովագրական  
մուծում պիտի կատարի  $16^0/0$ -ից վոչ պակաս,  
այսինքն՝ մի ռուբլուն 16 կոպ., իսկ «Ժամանա-  
կավոր կանոններով» գյուղացիական տնտեսու-  
թյունների մեծ մասը ազատվում են պարտադիր  
ապահովագրությունից և իրենց բատրակներին  
ու բատրակուհիներին կարող են ապահովագրել  
միայն կամավոր կերպով։ «Ժամանակավոր կա-  
նոններով» պարտադիր սոցիալական ապահովա-  
գրությունը տարածվում է միայն հարուստ գյու-  
ղացիական տնտեսությունների վրա, վորոնք  
գյուղատնտեսական աշխատանքների ամբողջ սե-  
զոնին միաժամանակ տունվազն 3 բատրակ կամ  
բատրակուհի յեն աշխատեցնում\*): Նույնիսկ այս-

\* ) Գյուղատնտեսական աշխատանքների սեզոնն  
սկսվում ե գարնանացանից և շարունակվում ե մինչև  
քերքի հավաքելը։ Զանազան տեղերում կարող ե գյու-  
ղատնտեսական աշխատանքների սեզոնը կամ կամ  
յերկար լինել:

պլսի գյուղացիական տնտեսություններն ել ի-  
րենց բանվորներին ապահովագրում են արտօն-  
ւալ պայմաններով։ Բացի այս համեմատությու-  
նից, վոր մենք արինք «Աշխատանքի Որենսգրքի»  
հետ, վարձողներին մի շարք ուրիշ հարմարու-  
թյուններ ել են տրվում, վոր թեթևացնում են  
վարձելու պայմանները։

Համաձայն «Ժամանակավոր կանոնների»  
ինչպես բանավոր համաձայնության, այնպես և  
գրավոր պայմանագիր կնքելու դեպքում, վարձ-  
վելու պայմանները վորոշվում են բատրակի կամ  
բատրակունու և վարձողի համաձայնությամբ։

---

## ԻՆՉՈ՞Ր ԱՎԵԼԻ ԼԱՎ Ե՛ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱ- ՆԱԳԻՐԸ ԿՆՖԵԼ ՄԻՌԱԹՅԱՆ ՄԻԶՈՑՈՎ

Բատրակների ու բատրակուհիների կողմէց  
կարող ե համաձայնության գալ յեվ «աշխա-  
տանքի պայմանագիրը» ստորագրել զյուղատնիք-  
սական յեվ անտառային բանվարեների միու-  
թյունը: («Ժամանակավոր կանոններ»-ի 2-րդ  
հոդված): Բատրակների ու բատրակուհիների  
համար պայմանագիր կնքելուն արհեստակցական  
միությունը մասնակցում է իր ներկայացուցչի  
միջոցով. գյուղում միության ներկայացուցիչ-  
ները բատրակներին ու բատրակուհիներին ոգ-  
նում են վարձողների հետ պայմանավորվելիս և  
աշխ. պայմանագիր կնքելիս: Հիմա բատրակներն  
ու բատրակուհիները շատ լավ են հասկանում,  
վոր իրենց համար ավելի լավ ե վարձողների  
հետ պայմանագիր կնքել բատրակների միության  
միջոցով, այսինքն՝ գյուղատնտեսական և ան-  
տառային բանվորների միության միջոցով, դրա  
համար ել, քիչ ե պատահում, վոր առանց մի-  
ության պայմանագիր ստորագրեն: Վոր բատ-  
րակները լավ են հասկացել միության միջոցով

պարմանագիր կնքելու ոգուտը, դա յերեսում ե  
 նրանից, վոր տարեց տարի շատանում ե միու-  
 թյան միջոցով աշխ. պայմանագիր կնքողների  
 թիվը. 1923 թվին միության միջոցով կնքվել ե  
 19,100 պայմանագիր, 1924 թվին.—376,100,  
 1925 թվին 819,400 և 1926 թ. հունվարից սեպ-  
 տեմբեր—մեկ միլիոնից ավելի պայմանագիր:  
 Միության ներկայացուցիչը միության մեջ կազ-  
 մակերպված բատրակների ուժեղ մասնակցու-  
 թյամբ, միշտ ել կարող ե բատրակի համար ա-  
 վելի լավ պայմաններով համաձայնության գալ  
 վարձողի հետ: Նա բատրակներից ել լավ զիտի  
 բատրակների աշխատանքին վերաբերող որենք-  
 ները և դրա համար ել ավելի լավ, լրիվ ու  
 ճիշտ կկազմի «Աշխատանքի պայմանագիրը», վոր-  
 պեսզի թե աշխատելու ժամանակ և թե վերջում,  
 աշխատավարձը ստանալիս ավելորդ վեճեր և  
 թյուրիմացություններ չծագեն վարձողի ու բատ-  
 րակի միջև: Բացի այդ միությունը ունի աշխա-  
 տանքի պայմանագրի համար պատրաստի տպված  
 թերթեր, վոր կազմված են որենքի հիման վրա:  
 Այս թերթիկի և պայմանագիրը գրելու համար  
 միությունը վոչ մի վարձատրություն չի վերց-  
 նում վոչ բատրակից և վոչ ել վարձողից: Բացի  
 այդ, միությունը իր վրա յեւ վերցնում աշխ.  
 պայմանագիրը ցուցակագրել առյու աշխա-

տանքը. Իսկ հետո, յերբ արդեն աշխատանքի պայմանագիրը կնքված ե, արհեստակցական միությանը հետևում ե, վոր վարձողը լրիվ կատարի պայմանագրի բոլոր կետերը:

Աշխատանքի պայմանագիրը արհեստակցական միության մասնակցությամբ կնքելը ձեռնուու լենակ վարձող գյուղացիներին: Գյուղացին վոչ մի կոպեկ չի ծախսում «Աշխատանքի պայմանագրի» թերթիկի համար, կարիք չի լինում դես ու դեն ընկնել, մի գրող մարդ ճարել կամ մի գյուղական «ատվակատ» գտնել աշխատանքի պայմանագիրը զրել տալու համար: Ազատվում են նաև պայմանագիրը ցուցակագրել տալու գործից: Իսկ ամենազլխավորն այն ե, վոր արհմիության ներկայացուցչի մասնակցությամբ դրված աշխատանքի պայմանագիրը կլինի ճիշտ և որենքին համապատասխան: Այլևս վոչ մի թյուրիմացություն ու դալմաղալ դրա մասին չի լինի: Իսկ յեթե պայմանագիրը գրի ինչ վոր գյուղական «ատվակատ», ով գիտի, ինչ շիլաշփոթ կշինի: Շատ տեղեր այս ամենը լավ են հասկացել գյուղացիները և իրենք են զնում միություն, վոր պայմանագիր կնքեն իրենց բատրակի կամ բատրակուհու համար:

ԲԱՏՐԱԿՆԵՐԻ ՈՒ ԲԱՏՐԱԿՈՒՀԻՆԵՐԻ ԱՐՀԵՄՏԱԿ-  
ՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՉՊԵ՞Ս Ե ՈԳՆՈՒՄ  
ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
ԿՆՔԵԼԻՍ

ԽԱՀՄ-ի գլուղատնտեսական ու անտառա-  
յին բանվորների միությունը բատրակների հա-  
մար աշխատանքալին պայմանագիր կնքելուն  
մանակցում ե իր ներկայացուցիչների միջ ցով։  
Ովքե՞ր են միության արդ ներկայացուցիչները.  
Դրանք շրջկոմների գլուղբատրակոմների անդամ-  
ներն են կամ շրջկոմների հատուկ լիազորները,  
վորոնց շրջկոմներն ուղարկում են պայմանագիր  
կնքելու։

Միության ներկայացուցիչներն ինչպե՞ս են  
ոգնում բատրակներին ու բատրակուիիներին  
վարձողների հետ աշխատանքային պայմանագիր  
կնքելիս։—Նրանք մասնակցում են բատրակի կամ  
բատրակուհու բանակցություններին վարձողների  
հետ, ոգնում են բատրակներին ու բատրակու-  
ձիներին, վոր ավելի լավ պայմաններով համա-  
հայնվեն վարձողների հետ — մեծ աշխատավարձ  
ստանան, սնունդը և մյուս բոլոր պայմանները

լավ լինեն։ Առանց միության ներկայացուցչի բատրակի համար դժվար է համաձայնության գալ վարձողի հետ։ Շատ անդամ բատրակն ինքն ել չի իմանում բատրակների աշխատանքի մասին յեղած որենքները։ Վարձողն ոգտվում է բատրակի որենքները չիմանալուց և նրա այդ անփութությունն ոգտագործում է իր ոգտին։ Բայց միության ներկայացուցչին վարձողը չի կարող խաբել, վորովհետև նա լավ գիտի որենքները և վարձողների բոլոր ֆանդ ու ֆելերը։

Միության ներկայացուցիչը խստորեն հետևում է, վոր վարձողը չխաբի բատրակին կամ բատրակուհուն վարձելու ժամանակ։ Նա ինքն է գրում աշխատանքի պարհանագիրը, վորի մեջ ամեն ինչ նախատեսնված է լինում, վորպեսզի վարձողը աշխատանքային պարմանագիրը կնքելուց հետո ել չկարողանա խաբել բատրակին կամ բատրակուհուն։ Վորպեսզի վարձելու պայմանները ավելի լավ լինեն և աշխատավարձը բարձր լինի, միության ներկայացուցիչները պայմանագիրը կնքելուց առաջ այդ ամենի մասին խոսում, համաձայնության են գալիս բատրակների ու բատրակուհիների հետ, նրանց ժողովների լեն հրավիրում, վորտեղ քննում են վարձելու պարմանները։

Միության ներկայացուցչի մասնակցու-

թիամբ կնքած աշխատանքային պայմանագիրն ստորագրում են բատրակը (իսկ իեթե բատրակուհու համար եւ բատրոկուհին), վարձողը և միության ներկայացուցիչը: Յերբ աշխատանքային պայմանագիրն արդեն ստորագրված է, միության ներկայացուցիչն ինքն եւ տոմարագրում գյուղխորհրդում: Յուցակագրությունից հետո աշխատանքի պայմանագրի մի որինակը տրվում է բատրակին կամ բատրակուհուն, մյուսը վարձողին, յերըրդը արվում է միությանը, իսկ չորրորդը մնում է գյուղխորհրդում: Բոլոր այդ չորս որինակները գրվում են տպված թերթերի վրա, վորի ձեզ հաստատված ելինում գյուղատեսական և անտառային բանվորների միության կենտրոնական կոմիտեյի կողմից: Վերևն արդեն առացինք, վոր այդ թերթիկների համար միությունը վոչ մի կոպեկ վարձ չի վերցնում վոչ բատրակից և վոչ ել վարձողներից:

---

**ՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐՆ ԻՆՉՊԵՍ  
ԵՆ ԿՆՔՈՒՄ ԲԱՏՐԱԿՆԵՐԻ ԱՅԽԱՏԱՆՔԻ ՊԱՅ  
ՄԱՆԱԳՐԵՐԸ**

Վորպեսզի աշխատանքի պայմանագիր կնքելիս ավելի լավ պաշտպանվի բատրակների շահերը, սիրթյան ներկայացւցիւը պետք է լավ իմանա բատրակացին կյանքի և բատրակների ու բատրակուհիների կյանքի պայմանները։ Նա պետք է լավ ճանաչի և այն գյուղացիական տընտեսությունները, վորոնց հետ պետք է աշխատանքի պայմանագրեր կնքի։ Նա պետք մանրամասն իմանա, թե շրջանում վոր գյուղացիական տնտեսություններն են բատրակ կամ բատրակուհի վարձում և պետք է այդ տնտեսությունների հաշվառումն ունենա։ Ավելի ևս մանրամասն ու լավ պիտի իմանա արդյունաբերական տիպի բոլոր գյուղացի կան տնտեսությունները, վորոնց մեջ աշխատանքի պայմանները վորոշվում են վոչ թե ոժանդակ վարձուաշխատանքի մասին յեղած «Ժամանակավոր կանոններով», այլ «Աշխատանքի ու ենսպրքի» հիման վրա։

Այս ամենը միության ներկայացուցիչը նրա համար պիտի իմանա, վորպեսզի ավելի լավ կազմակերպի իր շրջանի բատրակների պաշտպանության գործը և ավելի հաջող տանի աշխատ նքի պայմանագրի համար տարվող բանակ ցությունները վարձողի հետ:

Աժիատանիքի պայմանագիր կնիքելիս միուրյան ներկայացուցիչը պետք է իմանա, թե վոր ՏԻՏԵՍՈՒԹՅՈՒՆԻց ինչպիսի պահանջներ կարելի յե անել: Այդ պահանջները պետք է համապատասխանեն Վարձողի ՏԻՏԵՍՈՒԹՅՈՒՆ դրաւթյունը յեվ կարողությունը Ինարկե, արդյունքերական տիպի գյուղացիական տնտեսություններից ավելի բարձր պահանջներ պիտի անել, քան թե այն գուղացիական տնտեսություններից, վորոնց վրա տարածվում են «Փամանակավոր կանոնները»: Արդյունաբերական տիպի գյուղացիական տնտեսությունների նկատմամբ պետք ե ձգտել, վոր նրանց բառակների ու բատրակուների աշխատանքի պայմանները մոտակախորհրդացին տնտեսության բանվորների դրությունից վատ չինեն: Մակայն և այն տնտեսություններում, վորոնց վրա «Փամանակավոր կանոններն» են տարածվում, ամեն տեղ և բոլոր տնտեսություններում ել աշխատանքի պայմանները միատեսակ լինել չեն կարող: Անկաս-

կած, ավելի հարուստ տնտեսություններում կարելի յեւ և պետք եւ աշխատել, վոր աշխատանքի պայմաններն ավելի լավ լինեն, քան թե չքավոր տնտեսություններումն եւ: Միությունը և նրա ներկայացուցիչը պետք և աշխատեն վորքան կարելի յեւ ավելի մեծ թվով բատրակներ ընդդրկեն աշխատանքի պայմանագրերով: Բայց այդ չպիտի անել բատրակներին ու վարձողներին ստիպելով, վոր նրանք գնան միություն աշխատանքի պայմանագիր կնքելու: Բատրակների շահերը լավ և ճիշտ պաշտպանելու միջոցով պետք եւ ուժեղացնել ու խորացնել արհեստակցական աշխատանքը նրանց մեջ և բարձրացնել միության հեղինակությունը բատրակների ու բատրակուհիների աշքում: Աշխատանքի պայմանագրեր կնքելիս միությունը պետք եւ կազմակերպի բատրակության պաշտպանության գործը տուածին հերթին այնտեղ, ուր ավելի շատ են շահագործում և խարում բատրակներին և բատրակուհիներին կուլակալին տնտեսություններում, արդյունաքերական տիպի տնտեսություններում բատրակությունն ավելի շատ եւ գտում միության պաշտպանության կարիքը: Դրա համար ել միության ներկայացուցիչները պետք եւ իրենց նպատակը դարձնեն աշխատանքի պայմանագրերով ընդդրկել այն բոլոր բատրակներին ու բատրակու-

հիներին, վորոնք աշխատում են արդպիսի տըն-  
տեսություններում։ Պետք ե աշխատել նաև, վոր  
առաջին հերթին աշխատել աշխատավոր կնքվի այն  
բատրակների ու բատրակուհիների համար, վո-  
րոնք միության անդամ են, նրանց առավելու-  
թյուն տալ աշխատանք տալու խնդրում, քան թե  
այն բատրակ—բատրակուհիների, վորոնք միու-  
թյան անդամ չեն։

Աշխատանքի պարմանագրեր կնքելիս ավելի  
լավ արդյունքների հասնելու համար հարկավոր  
ե ամենից առաջ զրույց ունենալ բատրակների  
ու բատրակուհիների հետ աշխատանքի պարմա-  
նագրեր կնքելու աշխատանքների մասին և հե-  
տո միայն սկսել պայմանագրերի կնքումը։ Այդ-  
պիսի զրույցներ ու խորհրդակցություններ պետք  
ե կազմակերպել բատրակների հետ, ամեն ան-  
գամ մեծ թվով բատրակներ վարձելու սեղոնի  
սկզբին։ Այդ զրույցների և խորհրդակցություն-  
ների ընթացքում պիտի քննել, թե ինչպես ա-  
վելի լավ կլինի պարմանագրեր կնքել, ինչ պա-  
հանջներ պիտի առաջադրել այս կամ այն վար-  
ձողին։ Այդ ժողովներին միության ներկայացու-  
ցիչներն և առաջավոր բատրակներն ու բատրա-  
կուհիները պետք ե բացատրեն իրենց ընկերո-  
ներին աշխատանքային որենքները, միության  
դերն ու նշանակությունը, միության կազմած

աշխատանքի նկայմանագրի և շանտկությունը։ Այդ  
բոլոր հարցերի քննությունը ուղնի միության  
ներկայացուցչին՝ սերտ ու գործնական կապ  
ստեղծել բատրակության հետ, և ավելի լավ ու  
կազմակերպված տանել աշխ. պայմանագրերի  
աշխատանքը։ Այդ ժողովներն ու բատրակու-  
թյան հետ յեղած տեսական կապը պետք է ոգ-  
տագործել նաև այն նախակռվ, վոր վերացվի  
մրցումը բատրակների միջից, այս կամ այն աշ-  
խատանքին վարձվելու ժամանակ։ Պետք է նիւթել,  
վոր աշխատանի վարձվելու ժամանակի բատրակ-  
ների մեջ յեղած մեցուքյունը մեծ չարիք է  
նրանց համար։ Այդ մրցությունը վատացում ե  
բատրակների դրությունը վարձվելու ժամանակ  
և արգելք ե հանդիսանում միության ախա-  
տանքներին։ Այդ չարիքը կարելի յե վերացնել  
միան բատրակության կազմակերպվածությամբ  
և նրանց մեջ միութենական ախատանքն ու-  
ժեղացնելով։

Միության ներկայացուցիչը չպիտի սպասի,  
վոր բատրակը կամ բատրակ ւհին իրեն դիմեն  
ոգնելու աշխ. պայմանագիրն ստորագրելու գոր-  
ծին, այլ ինքը պիտի գնա նրանց մոտ։ Միու-  
թյան ներկայացուցիչը պետք է ծանոթանա  
վարձողի տնտեսության հետ։ Դա կոգնի միու-  
թյանը, վոր աշխ. պայմանագիրը կնքելիս ավելի

լավ պաշտպանի բատրակի կամ բատրակուհու շահերը:

Վարձողի հետ բանակցությունները պետք են վարել բատրակի կամ բատրակուհու հետ միասին: Զի կարելի քույլ տալ, վոր վարձողի նետ բանակցություններ վարվեն առանց բատրակի կամ բատրակուհու մասնակցության: Նույնիսկ ամենալավ հետևանքների համար ելու գեպքում այդպիսի բանակցությունները կարող են դժոհություն և կասկած առաջացնել վարձվողի մեջ: Ավելի լավն են, վոր բատրակը կամ բատրակուհին ինքն են համաձայնության գալիս վարձողի հետ, իսկ միության ներկայաց ցցիչը միայն ոգնում են նրան ավելի լավ պայմաններ առաջադրել և կնքում են պայմանագիրը: Ճիշտ չի կարել համարել նաև այն, վոր միության ներկայացուցիչը միայն պարմ նազիրն են գրում, առանց մասնակցելու բանակցություններին և առանց բավորարչափառքի ոգնելու, վոր բատրակը կամ բատրակուհին ավելի լավ պարմանագրում: Սխալ են մանավանդ այն, վոր աշխատանքի պայմանագիրը գրվում են փաստորեն վարձվելուց յերկար ժամանակ անցնելուց հետո: Յեթե միության ներկայացուցչի մասնակցությունը միայն պարմանագիր գրելը լինի, դա չափ քիչ ոգուտ կտա բատրակին կամ բատ-

բակուհուն։ Իսկ յեթե նկատի ունենամք, վորաց պայմանագրով վարձողը դեռ վորոշ տոկոս ել վճարում է միությանը, ապա վարձողը միության մասնակցությունը պայմանագիր գրելու խնդրում կարող է սխալ հասկանալ։ Վարձողը կարող է մտածել, վոր միությունը ուղղակի ուղում է իրենից տոկոսներ ստանալ, դրա համար ել գրում է պայմանագիրը։ Դրա համար ել պետք է խուսափել հետին թվով աշխատայմանագրեր գրելուց, այսինքն այն ժամանակ, յերբ բատրակը կամ բատրակուհին աշխատանքի մեջ են։ Միությունը պետք է շտապի մասնակցել պայմանագիր գրելուն այն ժամանակ, յերբ կողմերը պայմանագործում են։ Միայն այդ ժամանակ միությունը կարող է բատրակին կամ բատրակուհուն անհրաժեշտ ոգնություն ցույց տալ վարձողի հետ համաձայնության գալու գործում։

Միության մասնակցությամբ կնեած աշխատանքի պայմանագրերը անպատճու պիտի սուրագրված լինեն միության ներկայացուցչի կողմից։ Բայց միաժամանակ պայմանագիրը պիտի ստորագրե և ինքը բատրակը կամ բատրակուհին։ Նաև լավ պետք է նիւթել, վոր—աշխատանքի պայմանագիրը պետք է կազմել ու սուրագրել չորս որինակից։ Աշխատանքի պայմա-

նազիրն ստորագրելուց հետո մի որինակը պետք  
տալ բատրակին, մյուսը վարձողին։ Իսկ մյուս  
յերկու որինակը տրվում ե գյուղխորհրդին՝ ցու-  
ցակագրելու։ Ցուցակագրելուց հետո պայմանա-  
գրի որինակներից մեկը մնում ե գյուղխորհրդում,  
իսկ մյուսը պահպում ե միության մոտ։

---

## ԻՆՉ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԻՇԱՏԱԿԵԼ ԱԾ- ԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

Մենք արդեն գիտենք, վոր աշխատանքի պայմանագիրը մի համաձայնություն եւ վարձողի և վարձվողի կամ պրոֆմիության միջև, վորը աշխատանքի պայմանագիր եւ կնքում բատրակի կամ բատրակուհու անունից։ Գիտենք նաև, վոր աշխատանքի պայմանագրի պայմանները վորոշվում են սրենքի հիման վրա. ոժանդակ վարձու աշխատանքի ոգտագործող գյուղացիական տնտեսություններում «Ժամանակավոր կանոնների» հիման վրա, իսկ արդյունաբերական տիպի գյուղացիական տնտեսություններում «Աշխատանքի Որեւողքի» հիման վրա։ Աշխատանքի պայմանագրով յերբեմն այնպիսի պայմաններ են նախատեսնվում, վորոնք որ ենքուանախատեսնված չեն, կամ հիշատակված են պայմանական կերպով։ Այսպիսով տօնաւանիքի պայմանագիրը մի տեսակ լրացնում է որենիք այնպիսի պայմաններով, վորոնիք չկան որենիքում յեվ վորոնիք սահմանվում են յերկու կողմերի համաձայնությամբ։ Աշխատանքի պայմանագրում զբաժան պայմանների

կատարելը նույնքան պարտադիր է, ինչպես վոր պարտագիր են որենքում մատնանշած պայմանները։ Աշխատանքի պայմանագիրը չկատարելու համար վարձողը պատասխանատու յե այնպես, ինչպես պատասխանատու յե որենքը չկատարելու համար։

Աշխատանքի պայմանագրում պետք է գրվեն միայն այնպիսի պայմաններ, վորոնք լերկու կողմերի համաձայնության գործ են և վորոնք չկան որենքում։ Կարիք չկա աշխատանքի պայմանագրում այնպիսի պայմաններ գրել, վորոնք արդեն կան որենքում և վարձողի ու վարձվողի համաձայնությամբ չեն վորոշվում։

Այդ դեպքում ի՞նչ պայմանների մասին ոլիտի գրել աշխատանքի պայմանագրում։

Վարձելու ժամանակամիջոցը.

Աշխատավարձի չափը.

Վարձողի պարտականությունները.

Հաշիվը մաքրելու և աշխատավարձը վճարելու ժամկետները.

Վարձվողին բնակվելու տեղ, ուտելիք, բանվորական հագուստ և վոտնաման տալը.

Բանվորական որվա անողությունը.

Հանգստի որեր աալը.

Սոցիալական ապահովագրությունն ու վարձողի պարտավորությունը՝ վարձվողին հիվանդանալու դեպքում բժշկելու մասին։

Արձակման և արձակելու դեպքում նպաստ տալու կարգը.

Վարձվողին փոխհատուցում տալը, յեթե պայմանագիրը կնքելուց հետո վարձողը հրաժարվում է աշխատանք տալ վարձվողին.

Մատնանշել, թե աշխատանքի պայմանագրում չնախատեսնված աշխատանքի պայմանները վոր որենքով են կարգավորվում.

Այն տոկոսալին հատկացումները, վոր վարձողը պիտի տա արհմիությանը համաձայն պայմանագրի.

Անչափահասների ու փոքրահասակների աշխատանքի հատուկ պայմանները:

Բացի այս հիշատակած պայմաններից աշխատանքի պայմանագրում պետք է հիշատակել նաև այն բոլոր պայմանները, վորոնք վարձվելու ժամանակ բանակցության նյութ են դառնում վարձողի և բատրակի կամ բատրակունու միջև:

Յուրաքանչյուր առանձին դեպքում անհրաժեշտ է իմանալ, թե տվյալ գյուղացիական տրնտեսությունը վոր որենքի գործունելության տակ է ընկնում, վորովհետև համաձայն դրան ել պետք է աշխատանքի պայմանագրում վորոշվեն վարձվելու պայմանները:

Այժմ ավելի մանրամասն կերպով բացարենք, թե աշխատանքի պայմանագրի մեջ ինչ-

ողես պետք եւ հիշատակել վերը հիշվուծ աշխատանքի հիմնական ոլայրմանները:

**Վարձելու ժամանակամիջոցը**

Ամեն մի աշխատանքի ոլայրմանազրի ամենաառաջին պայմաններից մեկը վարձելու ժամանակամիջոցն եւ Շատ անգամ աշխ. պայմանագիրը գրելիս այնքան ել ուշազրություն չեն դարձնում այդ պայմանը վորոշելուն: Յերբեմն կարելի է հանդիպել աշխատանքի պայմանագրերում վարձելու ժամանակամիջոցը վորոշած այս կերպ. — «մինչև խոտհունձի ժամանակը», «մինչև վարը», «մինչև բերքը հավաքելը», «մինչև նախրաթող», «մինչև ձյուն դալը» և այլն:

Վարձելու ժամանակը այս ձեռվ վորոշելը ելի հնարավոր կլիներ, թեթե աշխատավարձն ել վորոշվեր վոչ թե միանդամից ամբողջ ժամանակամիջոցի համար, այլ ամսականով, շաբաթավարձով կամ թե որականով: Բայց հենց բանն ել այն եւ, վոր այդպիսի պայմաններում սովորաբար աշխատավարձը վորոշվում եւ սերող ժամանակամիջոցի համար միանդամից: Բայց չեն վոր խոտհունձը կամ հերկը կարող եւ տեել շաբաթ, կարող եւ տեել և 2 ամիս:

Դե տես, թե ինչ դրության մեջ կընկնի բատրակը, նա մտածում եր, վոր վորոշ վարձով

պիտի աշխատի յերկու շաբաթ, իսկ հիմա ստիպված ե նույն վարձով յերկու տմիս վզին ձգել: Կամ թե ինչ կլինի, յեթե վատ յեղանակի պատճառով կալերը ձգձգվեն յերկու — յերեք ամիս: Զյունն ել, հո գիտեք, վոր ամեն տարի միենույն ժամանակը չի դալիս: Հաճախ ձմեռն ել ե մեկ յերկու ամսով ուշանում: Բերված բոլոր որինակները ցույց են տալիս, վոր վարձելու ժամանակամիջոցը արդպի անվորոշ ժամկետներով վորոշել չի կարելի: Աշխատանքի պայմանագրում վարձելու ժամանակամիջոցն այս ձևով վորոշելուց վարձվողը կարող ե շատ վատ դրության մեջ ընկնել: Դրա համար ել վարձելու ժամանակախցոցը «հունձ», «հերկ» «կալեր» «նախարարող» յեվ այլ նման անվորու ու առանձնական ժամկետներով չպիտի փորուել, այլ պետք ե մասնաւուել աշխատանին սկսելու յեվ վերջացնելու ամիսը, ամսարիվը յեվ կամ նիւթ կերպով ցույց տալ թե քանի ամիս, ըստար յեվ որ պիտի աշխատի վարձվողը: Որինակ՝ «հունվարի մեկից մինչև սեպտեմբերի 15-ը»: Կամ — «խոտհարքի և հնձի ժամանակ», 3 ամիս ժամանակով:

Վարձելու ժամանակամիջոցի հարցը լուծելիս պետք ե այս ել նկատի ունենալ: Վոր չի կարելի սի տարուց ավելի ժամանակամիջոցով աշխատանի պայմանագիր կնիւ («Ժամ. կո-

նոններ» հոդ. 4): Ինչու Վորովինետև մեր ժամանակներում կյանքի պայմաններն այնպես արագ են փոփոխվում, վոր մի տարուց ավելի ժամանակի համար կնքած աշխատանքի պայմանագիրը տարին անցնելուց հետո կարող ե արդեն վարձվողի համար անհարմար և անձեռնտուլինել: Հենց այդ նկատառումով ել «Ժամանակավոր կանոններով» արգելվում ե մի տարի առաջ աշխատանքի պայմանագիր կնքել: Որինակ՝ չի կարելի 1929 թվի ապրիլին այնպիսի աշխ. պայմանագիր կնքել, վորով բատրակը պարտավորվում է 1930 թվի ապրիլից աշխատանքի անցնել, ալսինքն՝ պայմանադիրը կնքելուց մի տարի հետո:

Զպետք ե այնպիսի աշխատանքի պայմանագրեր կնքել, վորոնք իրենց յերկար ժամանակամիջոցով կարող են անձեռնտու և ստրկացնող դառնալ բատրակի կամ բատրակունու համար: Բայց ե այնպես պետք ե աշխատել, վոր բատրակներն ու բատրակունիներն ապահովված լինեն ժշտական և թե ավելի յերկարատև աշխատանքով: Պետք ե հիշել, վոր զործագրկությունը բատրակության համար կտտարյալ պատուհաս եւ ֆրա համար ել պետք ե աշխատել, վոր բատրակները և բատրակունիները վարձվեն ամբողջ տարվա կամ թե ամբողջ տմառնային սեզոնի համար:

Աշտծվողի պարտականությունները

Աշխատանքի պարմանագրում պետք և մանրամասն գրել, թե բատրակը կամ բատրակունին ինչ աշխատանքի համար ե վարձվում, մեկ առմեկ թվել վարձվողի բոլոր հիմնական (դիխավոր) պարտականությունները։ Աշխատանքի պայմանագրում կիսատ թողնված ամեն մի հարցի պատճառով վերջուժ կարող են վեճ ու թյուրիմացություններ պատահել։ Այդպիսի կիսատ ու մութ կետերը հաճախ ողտադործուժ են վարձողները, վորապեսդի վարձվողից պահանջեն ավելի շատ աշխատանք կատարել, քան թե պայմանագրվել են վարձելիս։ Վարձողին դա ձեռնուույե, բայց բատրակը կամ բատրակունին այդպիսի թերի կետերի պատճառով ամենաթշվառ ճորտության մեջ են ընկնում։ Որինակի համար՝ բատրակը վարձվում ե հերկ անելու համար, բայց տերը ստիպում ե նրան աշխատել վոչ միայն դաշտում, այլ և տանը — բակը, գոմը մաքրել, աղըը կըել, ջուր բերել, յերեխաններին պահել և ընդհանրապես կատարել ամեն տեսակ աշխատանք։ Եվնում ե և այսպես, վոր բատրակին վարձում են իրենց տնտեսության մեջ աշխատելու համար, իսկ հետո ստիպում են աշխատել նույն ուրիշների համար, որինակ՝ ուղար-

կում են իրենց խնամու կամ քավորի գոմը մաք-  
 րել, այս կամ այն աշխատանքը կատարել և այն:  
 Դրանից լավը չե նաև բատրակուհիների դրու-  
 թյունը: Բատրակուհին վարձվում ե տնային աշ-  
 խառնք կատարելու համար, իսկ նրան ստի-  
 պում են աշխատել նաև դաշտում, բանջարանո-  
 ցում, գեռ բացի դրանից պահանջում ել են, վոր  
 ինամի յերեխաներին: Կամ թե բատրակուհին  
 վարձվում ե մեկ կով ունեցող տնտեսության  
 մեջ, բայց հետո բանից դուրս ե գալիս, վոր  
 վոչ թե մեկ, այլ հինգ կով ե: Բատրակուհին  
 ստիպված ե լինում բոլոր կովերին խնամել,  
 կթել, և այն ել նույն աշխատավարձով, ինչ վոր  
 պայմանավորվել եր մեկ կովի համար: Յեվ այս  
 բոլորը կատարվում ե միայն նրա համար, վոր  
 աշխատանքի պայմանագրում ճիշտ կերպով չի  
 ցույց տրված, թե պայմանագրված աշխատա-  
 վարձով բատրակուհին ինչպիսի աշխատանքներ  
 կատարելու պարտականություն և վերցրել իր  
 վրա: Պայմանագրում միայն ասված ե յեղել,  
 վոր բատրակուհին վարձվում ե տնտեսության  
 մեջ աշխատելու համար, վորտեղ պետք ե նաև  
 կովերը կթի:

Բատրակների ճորտացման այսպիսի որի-  
 նակներ ինչքան ուզենաք՝ կարելի յե բերել:  
 Դրանից ազատվել կարելի յե միայն մի ճանպ-

պարհով.—աշխատանքի պայմանագրում մանրամասն պետք ե հիշատակել վարձողի պարտականությունները։ Այդ դեպքում վարձողը չի կարող բատրակին կամ բատրակունուն ստիպել՝ այնպիսի աշխատանք կատարել, վորի մասին զրված չե աշխատանքի պայմանագրում։

Մի քանի որինակ բերենք, ցույց տալու համար, թե ինչպես պիտի աշխատանքի պայմանագրում հիշատակել բատրակի կամ բատրակունու պարտականությունները։—«Դաշտային աշխատանքներ կատարելու համար—դութանով հերկ անելը, ցանելը, խոտ հավաքելը»։ «Անսուններին խնամելը—և կով և ձի, բակը մաքրել և ջուր կրել»։ «Բամբակը քաղհանելը»։ «Գետնախնձորի քուկը տալը»։ «Տնալին աշխատանքներ, յերկու կովի կթելու, խնամելու և չորս հասակավորի ու յերկու փոքրահասակի լվացքի հետ»։ «Մեկ յերեխայի խնամքի համար»։

### Աշխատավարձը

Բատրակների համար աշխատավարձի հարցը ամենալուրջ հարցն ե։ Բատրակներն ու բատրակունիները քիչ են վաստակում։ Հաճախ նրանց աշխատավարձն ալքան քիչ ե լինում, վոր չի բավականանում նույնիսկ ամենաանհրաժեշտ ծախսերի համար։ Մյուս կողմից ել բատրակների

մեծ մասը ամբողջ տարին աշխատանք չի  
ունենում, այլ աշխատում ե միայն ամառը։  
Սեզոնային բատրակը իր ամառվա սշխատա-  
վարձով պիտի ապրի ամբողջ ձմեռը։ Ձմեռը բատ-  
րակը յիթե նույնիսկ գործ գտնի, դա ել շատ  
պատահական ե լինում։ Յերբ ամառվա սեզոնային  
աշխատանքների համար բատրակի աշխատանքը  
պայմանագիր են կնքում, այս հանգամանքը  
չ զիտի մոռանալ։ Զոլիտի մոռանալ, վոր բատ-  
րակին ու բատրակուհուն ամառը կերակրում ե  
և ձմեռը, այսինքն՝ ամառվա աշխատածով ապրում  
ե և ձմեռը։ Դրա համար ել պետք ե աշխատել  
նրանց ամառվա աշխատավարձը բարձր լինի։

Պետք ե նկատի ունենալ նաև, վոր բատ-  
րակներն ու բատրակուհիները հաճախ աշխա-  
տավագան ստանում են վոչ թե փողով, այլ  
մթերքով։ Դա ավելի յե վատացնում նրանց նյու-  
թական դրությունը։ Դրա համար ել աշխատել, վոր  
վարձողները բատրակներին ու բատրակուհի-  
ներին վճարեն վոչ թե մթերքով, այլ փողով։  
Իսկ յեթե այս կամ այն պատճառով չի կարելի  
բոլորովին ազատվել մթերքով աշխատավարձը  
տալուց, այդ դեպքում գոնե պետք ե աշխատել,  
վոր ինչքան կարելի յե աշխատավարձի դրամա-  
կան մասն ավելի լինի։ Ավելի հարուստ տնտե-

սութիուններում պետք եւ աշխատել, վոր աշխատավարձի դրամական մասը պակաս չլինի աշխատավարձի այն պետական մինիմումից, վոր սահմանված եւ բանվորների համար:

Այն դեպքերում, չերք աշխատավարձը մթերքով եւ վորոշվում, աշխատանքի պայմանագրում պետք եւ զրել վոչ միայն այն, թե ինչ մթերք եւ տրվելու բատրակին կտմ բատրակուհուն, այլ և այն, թե ինչ հատկություն յիւ ինչ արժեքի մթերք եւ լինելու:

Որինակ՝ «նոր բերքից 20 փութ հաճարի ալյուր, փութը 1ռ. 20 կ., վարձողը պարտավոր եւ տանել և հանձնել բատրակին այսինչ գյուղում, իր տանը։ Յերկարավիգ կոշիկներ—15 ռուբլի արժողությամբ, քաթանի վերնաշապիկ, 4 ռուբլի արժողությամբ, մորթեւ տաք գլխարկ—5 ռուբլի արժողությամբ»։

Աշխատանքի պայմանագրում մթերքի տեսակն ու արժեքը նրա համար եւ անհրաժեշտ, վոր յեթե վարձողը մթերք չտա, վարձողը կարողանա պահանջել նրանից չտրված մթերքի արժեքը։ Բացի արդ, յեթե աշխատանքի պայմանագրում չպրվի մթերքի արժեքն ու վորակը, ապա անբարեխիղճ վարձողը կարող է խարել բատրակին։ Նոր կոշիկների փոխարեն կտա հները, վոր յերեք ռուբլի ել չտրժն, կամ թե նոր

վերնաշտպիկի փոխարեն հին, կարկատած և հաստրակ կտորից վերնաշտպիկ կտա, կամ թե զզդզված գլխարկ կտա և այլն։

Յերբեմն ել պատահում եր, վոր վարձողներին հաջողվում ե խարել բատրակին կամ բատրակունուն նույնիսկ այն դեպքում, յերբ աշխատանքի պայմանաշրջում մանրամասն նշանակված ե մժերբի վորակն ու արժեքը։

Որինակի համար բերենք մի այսպիսի դեպք. բատրակը զարնանից վարձվել ե զյուղացու մոտ աժառնալին աշխատանքների համար։ Պայմանագրով վարձողը պաշտավորվել ե բացի դրամական վարձատրությունից տալ նաև 15 փ. հաճարի ալյուր, փութը 1 ո. 20 կոպեկով։ Վարձողը հաշիվը մաքրում ե աշնանը, յերբ բատրակը վերջացնում ե իր աշխատանքը։ Աշնանն ել հաճարի ալյուրի զինը իջել ե մինչև փութը 1 ու Բատրակն իրավացի յե, յերբ հաշվում ե, վոր պայմանագրում դրված 15 փութի փոխարեն պետք ե ստանա 18 փութ, վորովհետև զարնանը 15 փ. հաճարի ալյուրն արժեքը 18 սուրլի, իսկ աշնանը իջել ե փութը 1 սուրլու։ Վարձողը ուրիշ կերպ ե մտածում։ Նա բատրակին ասում ե. «ինչպես վոր պայմանավորվել ենք, ստացիր 15 փութ ալյուր. ավելի վոչ մի փութ չեմ տա»։ Այսպիսի դեպքերից խուսափելու համար աշխա-

տանքի պայմանագրում պետք է դրել նաև, թե  
ինչ ձեռվ պիտի տրվի աշխատավարձի այս մասը,  
վոր մթերքով եւ տրվելու։ Հենց այս բերված ո-  
րինակի համար աշխատանքի պայմանագրում  
պետք եւ գրվեր, վոր յեթե հաշիվը մաքրելու ժա-  
մանակ ալյուրի արժեքը պակաս լինի պայմա-  
նագրում նշանակվածից, ապա վարձողը պարտա-  
վոր եւ ալյուր տալ. Նոր գնով 18 ոռութիւն արժե-  
քով. Զե՞ վոր բատրակը պայմանագրի համաձայն  
պետք եւ ստանա 18 ոռութիւն և վոչ թե 15 ոռութիւն։

Պայմանագրերը կնքելիս խիստ կերպով պիտի  
պայքարել մթերքով աշխատավարձ տալու այն  
ձեռքի հետ, վորոնք ճորտալին դրության մեջ  
են դնում վարձվողին—ինչպես որինակ՝ սպառ-  
վող բերքի մի վորոշ մասը տալը կամ ավելացած  
անասունների վորոշ մասը տալը և այլն։

Աշխատանքն այս ձեռվ վարձատրելը ճոր-  
տատիրական շրջանն են հիշեցնում։ Նրանք չա-  
փազանց ծանրացնում են այն բատրակների  
դրությունը, վորոնք համաձայնվում են այդպիսի  
պայմաններով աշխատել։ Այն բատրակը, վոր  
աշխատում եւ բերքի մի վորոշ մասն ստանալու  
պայմանով, չգիտի, թե ինչքան աշխատավորձով  
եւ աշխատում եւ յերաշտի, կարկտահարության  
կամ այլ պատճառով բերք չստացվելու դեպքում  
բատրակը կարող եւ բոլորովին առանց աշխատա-

վարձի մնալ։ Քիչ չեն պատահում դեպքեր, յերբ  
այդպիսի կիսրար-բատրակը նույնիսկ իր վրա յե  
վերցնում տիրոջ կատարած ծախսերի այն մասը,  
վոր ընկնում ե իր բաժնի վրա. որինակ՝ գյու-  
ղատնտեսական հարկի վճարմանն ե մասնակ-  
ցում։

Կիսրար-բատրակների համար աշխատանքի  
պայմանագիր կնքելիս պետք ե նկատի ունենալ,  
վոր կիսրարները զանազան տեսակի յեն լինում  
ե բոլոր կիսրարների համար ել պայմանագիր  
կնքել չի կարելի։ Այսատանքի պայմանագիրը  
պետք ե կնքել այն կիսրար-բատրակի համար,  
վորը վարձու յե տալիս միայն իր բանվորական  
ուժը։ Իսկ յեթե կիսրարը մի գյուղացի յե, վոր  
աշխատում ե իր ձիով, յեզներով կամ իր գու-  
թանով ու այլ գործիքներով. նրա համար աշ-  
խատանքի պայմանագիր չպետք ե կնքել։ Այդ-  
պիսի կիսրար հաճախ կարող ե լինել վոչ միայն  
սովորական, այլ նույնիսկ հարուստ գյուղացին։

Բատրակների ու բատրակունիների աշխա-  
տավորձի չափը վորոշելիս ամենից առաջ պետք  
ե նկատի ունենալ այն դիտողաթիւունները վոր  
արինք «Միության մասնակցությունը բատրակ-  
ների պայմանագիր կնքելու գործին» գլխում։  
Պետք ե նկատի ունենալ վարձողի տնտեսության  
ուժեղությունը. ավելի հարուստ գյուղացիական

տնտեսություններում պետք ե աշխատել բառ-  
րակի աշխատավարձն ավելի բարձր լինի և մըուս  
պայմաններն ել ավելի լավ լինեն։ Արդյունա-  
բերական տիպի զյուղացիական տնտեսություն-  
ներում, վորոնց նկատմամբ, համաձայն «Ժամա-  
նակավոր կանոնների» առաջին հոդ. ծանոթու-  
թյան կիրառվում ե խորհրդային տնտեսություն-  
ներում վարձու աշխատանք ուղարկործելու մա-  
սին լեզած վորոշումները, պետք ե աշխատել,  
վոր աշխատավարձը, նորմալ բանվորական որվա-  
տեսղությամբ ավելի պակաս չլինի, քան մոտա-  
կա խորհրդային տնտեսության մեջ ե։

Աշխատավարձը վորոշելու ժամանակ պետք  
ե նկատի ունենալ, վոր համաձայն «Ժաման. կա-  
նոնների» հոդված 8-ի, վարձողներից վոչ վոք  
իրավունք չունի բատրակին կամ բատրակունուն  
ավելի քիչ վճարելու, քան թե տվյալ վայրի հա-  
մար սահմանված պետական մինիմումն ե աշ-  
խատավարձի համար։ Յեվ պետք ե նկատի ու-  
նենալ, վոր պետական մինիմումը վոչ թե բան-  
վորների մի վորոշ խմբակի համար ե, ալ վերա-  
բերում ե բոլորին, ովքեր վարձու աշխատանք  
են տանում։ Դրա համար ել պետական մինի-  
մումից ցած վճարել չի կարելի վոչ սփայն հա-  
սակավոր բատրակներին ու բատրակունիներին,  
այլ յեվ անչափուսիասներին։

Աշխատավարձը պետական մինիմումի հետ  
համեստատելիս հաճախ հարց ե ծագում, թե այդ  
համեմատության ժամանակ պետք ե արդյոք  
աշխատավարձի մեջ հաշվել նաև այն ուժեղքի  
արժեքը, վոր վարձողը տալիս ե բատրակին կամ  
բատրակունուն։ Այդ հարցը ծագում ե զանազան  
պատճառներով. նախ, վոր «Փամանակավոր կա-  
նոններում» այս հարցի մասին պարզ ու վորո-  
շակի ցուցմունք չկա, իսկ յերկրորդ և գուցե-  
ամենազլիսավոր պատճառը պետական մինիմումի  
փոքր լինելն եւ Որինակ՝ 1927 թ. հունվարից  
մարտ ԽՍՀՄ ի Աշխատանքի ժողովրդական Կո-  
միսարիատը պետական մինիմումը սահմանել եր  
առաջին տարիֆալին զոտու համար 10 ռ., յերկ-  
րորդին՝ 9 ռ., յերրորդին՝ 8 ռ., չորրորդին՝  
7 ռ., 50 կ. և հինգերորդին՝ 7 ռ. Պետական  
մինիմումի չափերը յերեք, չորս անգամ պակաս  
են բատրակների ու բատրակուների իրական  
աշխատավարձից։ Ահա դրանից ել հարց ե առա-  
ջանում, թե արդյոք մնունդն ել պիտի մտնի  
պետական մինիմումի մեջ, թե վոչ։

Պետական մինիմումը վորոշելիս հաշվի րեն  
առնում բանվորի բոլոր ծախսերն ու մննդի  
ծախսերը։ Բայց այդ բոլոր ծախսերը հաշվում են  
միջին գներով և վոչ թե այն գներով, վոր կան  
այս կամ այն դյուղում կամ քաղաքում։ Բացի

այդ, պետական մինիմումը սահմանելիս հաշվի յեն առնում վոչ թե բանվորների սովորական կարիքները, այլ ամենապակաս, ամենաքիչ, ամենակրճատված պահանջները։ Հենց այստեղից ել առաջ ե գալիս «պետական մինիմում» անունը («մինիմում» նշանակում ե ամենաքիչ)։ Նշանակում ե սնունդի արժեքը մտնում ե մինիմումի մեջ, բայց նա հաշվվում ե վոչ թե այն գներով, ինչ վոր վարձողն ե առում, այլ միջին գներով։ Այսպիսով հարցը մնում ե պարզել, թե սնունդի արժեքը պետական մինիմումի վոր մասն ե կազմում։ Այդ հարցի ամենագործնական և ընդունելի պատասխանը կլինի. պետք ե աշխատել, վոր բատրակների ու բատրակունիների աշխատավարձի դրամական մասը պետական մինիմումից պակաս չլինի, կամ, գոնե պակաս չլինի մոտ  $\frac{2}{3}$  մասից։ Դա նշանակում ե, վոր սնունդը պետք ե գնահատվի պետական մինիմումի  $\frac{1}{3}$  մասից վոչ ավելի։ Հարցի այսպիսի լուծումը գործնական արժեք կունենա գլխավորապես այն ժամանակ, յերբ վճռվում ե մի վեճ, վոր ծագել ե նրանից, վոր բատրակը կամ բատրակունին աշխատել են առանց պայմանագրի, կամ թե պայմանագիրը կնքվել ե առանց միության մասնակցության։ Իսկ միութենական մարմինները աշխատանքի պայմանագիր կնքելիս պետք ե աշ-

խատեն, վոր բատրակի կամ բատրակուհու աշխատավորձը պակաս չլինի պետական մինիմումից, առաջ ու հաշվելու մնունդի արժեքը:

### Ա. Ըլսատավարնը վճարելու կարգը

Աշխատանքի պայմանագրում աշխատավարձի դրամական ու մթերքի չափերը ճիշտ վորոշելու հետ միաժամանակ պետք է ցույց տալ նաև աշխատավարձը վճարելու ժամկետները: Փորձը ցույց է տվել, վոր այս խնդրի նկատմամբ աշխատանքի պայմանագրերում շատ թերություններ են լինում:

Որինակ՝ այսպիսի մի դեպք՝ աշխատանքի պայմանագրում գրված է. «Աշխատավարձը տըրվում է ամեն ամիս»: Բայց թե վճը ժամանակ, ամսի սկզբին, կեսին, թե վերջին՝ այդ մասին վոչինչ առված չե: Մի ուրիշ դեպքում, գրված է, վոր վարձը տրվում է բատրակի ու վարձողի համաձայնությամբ: Լավ, իսկ յեթե նրանք համաձայնություն չեկան: Ի՞նչ անի այդ դեպքում բատրակը: Դատարան տա գործը:

Այս բոլորից յերեսում է, վոր այդ դեպքերում հարկավոր չափով ուշադրություն չի դարձվում աշխատավարձը վճարելու ժամկետների հարցի վրա: Ա. Ըլսատանի պայմանագրերում տնպայտան պետք է ցույց տալ, թե վարձողը վարձվո-

իլի աշխատվողաց յերք և վնարում, ինչ յել  
ինչ չափով:

Յեթե աշխատավարձի մեջ մթերք ել և մըտ-  
նում, մանավանդ հաց կամ ուրիշ մթերքներ,  
վորոնց գինը շատ հաճախ փոփոխվում է, աշ-  
խատանքի պայմաններում պետք և հիշոտակել  
վարձը տալու կարգը: Զի կարելի բույլ տալ, վոր  
բարակը կամ բարակուին կորցնեն իրենց  
աշխատանից հացի յեվ ուրիշ մթերքների զին-  
րի ընկերու պատճառով, ինչպես վոր ցոյց  
տիմի աշխատվարձի մասին յեղած գլուխ:

**Բնակարան, սեունդ, հագուստ յեվ կոսիկ**

Բատրակի կենցաղի մեջ մեծ նշանակու-  
թյուն ունեն ընակարանը, մնունդը, հազուստն  
ու վոտնամանը:

Ամենից շատ այս հարցերի մասին ե վեճ  
լինում բատրակների կամ բատրակուիների և  
վարձողների միջև: Աշխատանքի պայմանագրե-  
րում պետք և առանձնապես պարզ և մանրա-  
մասն գրել այն պայմանները, վոր վերաբերում  
են ընակարանին, մհանգին, հազուստին ու  
վոտնամանին:

Յեթե վարձողը ու յժանազրով պարտավոր-  
վել և բատրակին կամ բատրակունուն տալ, ո-  
պատ աշխատանքի պայմանազրում պետք և պարզ

զրված լինի — ինչ բնակարան և վորաեղ — վարձողի ընտանիքի հետ՝ միևնույն տանը, թէ տուանձին։ Վարձողի հետ համաձայնության դալիս պետք եւ աշխատել, վոր բատրակին կամ բատրակուհուն վարձողի ընտանիքից առանձնացրած սենյակ տրվի։ Իսկ յեթե դա հնարավոր չի, պետք եւ աշխատել, վոր վարձվողին մի առանձին անկյունն հատկացվի վարձողի տանը և կամ գոնե մի վորոշ տեղ քնելու համար։ Կարող եւ պատահի, վոր այս բոլորը շատ մանր հացցեր թվան, սակայն բատրակի կենցաղի մեջ որանք հսկալական նշանակություն ունեն։ Հաճախ պատահում ե, վոր որվա ծանր աշխատանքից հետո բատրակը մի տեղ չի ունենում պառկելու և հանդսուանալու համար։ Ատիպված ելինում սպասել, մինչև վոր վարձողը և նրա ընտանիքի բոլոր անդամները կընեն, վորից հետո ինքն ել հենց ուղղակի հատակին, շեմքում պառկում ել քնելու։ Աչխատանքի պայմանագրերում անհրաժեշտ ե նիշատակիլ նաեւ անկրողնի մասին, վոր խոստանում ե առաջ վարձողը բատրակին կամ բատրակուհուն։ Որինակ՝ «ծղոտի ներքնակ», բարձ և վերմակ» կամ «քեչա, բարձ և մուշտակ» և ալին։ Յեթե այս ամենը աշխատանքի պայմանագրում գրված չլինի, հետո վարձողը կարող ե վոչինչ ել չտալ։ Ի հարկե, ավելի լավ

կլիներ, յեթե բատրակը կամ բատրակուհին իւրենց սեփական անկողին ունենային, բայց չէ թե այդ չկա, պետք եւ համաձայնեցնել վարձողին, վոր նա տա:

Աշխատանքի պայմանագրում պակասս չափով մանրամասն չպետք եւ գրել նաև սնունդի պայմանները: Զի կարելի բավականանալ գրելով որինակ՝ «Ռւտելիքը վարձողից», Պետք եւ մանրամասն գրել—որական քանի՞ անկամ պետք եւ վարձողը կերակրի վարձվողին, ինչ ուտելիք պիտի տա առավոտը, նախաճաշին, ճաշին և յերեկոյան ընթրիքին, ինչքան հաց պիտի տա և ինչ տեսակի: Ինչքան ուղի պիտի ուտի՞, թե վորոշ չափով պիտի տրվի: Այս ամենը ամենայն մանրամասնությամբ պետք եւ գրվի աշխատանքի պայմանագրում: Հաճախ վարձողը ոգտվում եւ այս հարցերը մութ թողնելուց և սկսում եւ սղմել, կիսաքաղց թողնել բատրակին կամ բատրակուհուն:

Աշխատանքի պայմանագրում պետք եւ առանձին հիշատակել բանվորական հագուստն ու վոտնամանը և ուս չշփոթել նրանց հետ, վոր վարձողը խոստացել եւ տալ վորուես աշխատավարձ:

Բանվորական զգեստ յեկ վոտնաման անելով մենի հասկանում ենի այնպիսի ուր յեկ

վոտնաման, վոր վարձողը պայմանագրով  
սպառավորվել ե Տալ բաւրակին կամ բաւրա  
կուհուն աշխատանիների ծամանակ նազնելու  
համար: Այդպի ի հագուստն ու վոտնամանը  
կարող են հաշվիել բատրակի կամ բատրակու-  
նու աշխատավարձը: «Ժամանակավոր կանոննե-  
րը» չեն պարտավորեցնում բատրակին կամ բատ-  
րակուհուն բանվորական զգեստ տալ, բայց սո-  
վորաբար դա հաճախ պատահող յերեսութ ե:  
Բատրակներն ու բատրակո հիները իրենք ար-  
դեն համաձայնեցնում են վարձողներին, վոր  
իրենց բանվորական զգեստ և վոտնաման տրվի,  
վորովհետեւ բատրակն ու բատրակուհին հաճախ  
բոլորովին վոչ շոր են ունենում վոչ վոտնա-  
ման: Մյս հարցում մեծ նշանակություն ունի  
և աշխատավարձի չափը Յեթե բատրակը լավ  
աշխատավարձ ստանա, նա շատ ել չի համոզե,  
վոր իրեն վարձողը շոր ու վոտնաման տա: Իսկ  
ցած աշխատավարձ ստանալու դեպքում, ընդ-  
հակառակը, բատրակը միշտ ել աշխատում ե հա-  
մոզել, վոր վարձողը հագուստ կամ կոշիկ տա  
կամ այդ յերկուսն ել տա իրեն, վորովհետեւ իր  
հագուստով աշխատելը պարզապես անձեռնտու  
յե: Միության ներկայացուցիչները աշխատան-  
քի պայմանագրեր կնքելիս պետք ե լուրջ ուշա-  
դրություն դարձնեն բանվորական զգեստի ու

վոտնամանի հորցի վըա, վորովհետեւ վարձողից  
ալդ իրերն ստանալը շատ մեծ նշանակություն  
ունի քատրակի կամ բատրակուհու համար։ Միա-  
ժամանակ պետք է նկատի ունենալ, վոր ար-  
դյունաբերական տիպի զյուզացիական տևեսու-  
թյուններում, վորոնց վրա Աւատանի նրենս-  
գիրքն և աւածվում, պարտավոր են բարակ-  
ներին ու բարակունիներին բանվորական հա-  
գուստ յել վոտնաման տալ, համաձայն Աշխա-  
տանքի ժող. Կոմիսարիատի հաստատած չափերի։  
ԲՍՖԻՀ Աշխատամնքի ժողովրդական կոմիսարիա-  
տի կողմից հասարակական հոտաղների մտօին  
հաստատված վորոշման համաձայն վարձողները  
(հասարակությունն, հասարակության մասերը,  
տնտեսությունների խմբակները) նույնպես  
պարտավոր են բանվորական հագուստ և վոտ-  
նաման տալ հովիմներին և նրանց ոգնական-  
ներին։

Աշխատավարձի մեջ մանող հագուստի ու  
վոտնամանի մասին պետք է զրել պայմանագրի  
այն կետում, վորտեղ խոսվում է դրամտկան ու  
մթերքով աշխատավարձի մասին։

Պայմանագրում պետք է բույց տալ, թե  
վարձողը ինչպիսի հագուստ ու վոտնաման և  
պարտավորվել տալ վարձվողին, իսկ յեթե կա-  
րելի յե, զրեք թե վորքան ժամանակամիջոցով

և արվում և վարձելու ժամանակը վերջանալուց  
հետո այդ շորերը պիտի վերադարձվի վարձողին,  
թե պիտի մնա վարձվողի մոտ:

Աշխ ստանքի պայմանագրում պետք է գրել  
նաև, վոր բանվորական հագուստի ու վոտեա-  
մանի կարկատելը կատարվում է վարձողի հաշ-  
վին: Հակառակ դեպքում վարձվողն այնպիսի  
դրության մեջ կընկնի, որա աշխատարձը չի  
հերքի նույնիսկ տիրոջ տված հագուստն ու վոտ-  
եամանը նորոգելուն:

Կարող եւ պատահել, վոր պայմանագրում  
զրված լինի, թե վարձողը վարձվողին պիտի  
բանվորական հագուստ և վոտեաման տա, բայց  
վարձողը չկատարի այդ պայմանը: Այդպիսի  
դեպքերի համար պայմանագրում պետք է գրել,  
թե չտրված բանվորական հագուստի ու վոտեա-  
մանի դիմաց ինչպիսի վարձատրություն պիտի  
տա վարձողը վարձվողին, աշխատանքի ընթաց-  
քում իր սեփական հագուստով աշխատելու:

Բնակարանի, սեն նդի, նագուսի ու վոտ-  
եամանի մասին մեր բոլոր ասածները պես և  
հաւաքի առնել նաև նովիվների աշխ. պայմա-  
նագրերը կնիւիս: Բացի այդ, հասարակական  
հովիվների ու նրանց ոգնականների համար պայ-  
մանագրեր կնքելիս պետք է ամեն կերպ պար-  
քարել հովիվներին ու նրանց ոգնականներին

կան 8 ժամ ել չեն աշխատում։ Հաճախ ել գյուղատնտեսության մեջ աշխատանքը կախված ելինում լեղանակներից. ամառն անձրեւ ե գալիս, աշխատանքը կանգ ե առնում, իսկ հենց վորպարզ ու արև լեղանակ ելինում, ստիպված են լինում այնպես աշխատել, վոր բաց թողած ուրերի հաշիվը տեղը գա։ Ահա դրա համար ել «Ժամանակավոր կանոնները» թույլ են տալիս յերբեմն որվա մեջ 8 ժամից ավելի աշխատել։ Սակայն աշխատանիքի պայմանագրով յերկարացրած աշխատանիքի որ սահմանել կարելի յեմիայն բատրակի կամ բատրակուհու համաձայնությամբ։ Յեկ այն ել «Ժամանակավոր կանոնների» համաձայն (հոդ. 6.րդ) յերկարացրած բանվորական որ կարելի յես սահմանել սիայն գյուղատընտեսական աշխատանքների վորոշ շրջանների համար, որինակ՝ վար ու ցանքին, խոտ հունձին, հնձի ժամանակ, կալի ժամանակ։ Վորպեսզի վարձողը բատրակին կամ բատրակուհուն չստիպի կլոր տարին յերկարացրած բանվորական որով աշխատել, հարկավոր ե հենց սկզբից, վարձելու ժամանակ համաձայնության գալ, թե յերբ և որական քանի ժամ պիտի աշխատի և այդ բոլոր պայմանները գրել Աշխատանքի պալմանագրում։ Իսկ յեթե չհաջողվի կայուն վորոշակի բանվորական որ սահմանել ամբողջ ժամանակա-

միջոցի համար, ալդ դեպքում պետք է պարմա-  
նագըռում հիշատակել բանվորական որվա տևողու-  
թյունը աշխատանքների ամեն մի շրջանի հա-  
մար առանձին առանձին: Որինակ՝ հունվար, փե-  
տրվար, մարտ ամիսներին — 8 ժամ, ապրիլին և  
սեպտեմբերին — 9 ժամ, մայիսին, հունիսին,  
հուլիսին և օգոստոսին — 10 ժամ: Պայմանագ-  
րում կարելի յե զընել միջին բանվորական որը,  
վորովհետեւ նույնիսկ տարվա վորոշ ժամանակ-  
ներին, որինակ խոտ հունձին, նույնպես չի պա-  
հանջվում, վոր ամեն որ հավասար չափով աշ-  
խատանք տարվի. յերբեմն ստիպված են լինում  
ավել աշխատել յերբեմն, պակաս: Միջին բանվորա-  
կան որը կարելի յե սահմանել մի շաբաթով, մի  
ամսով կամ աշխատանքների վորոշ շրջանի հա-  
մար, որինակ՝ հնձի ժամանակ ե խոտ հունձին մեկ  
ու կես, յերկու ամսով: Միջին բանվորական ո-  
րը հաշվելիս նկատի յե առնվում ամբողջ շաբաթ-  
վա կամ ամսվա աշխատանքի ժամերը: Որինակ՝  
10 ժամյա միջին աշխատանքի որվա դեպքում  
կլինի մի շաբաթում 58 բանվորական ժամ: յեր-  
կուշաբթի որից մինչև ուրբաթ որը որտկան 10  
ժամյա կանի 50 ժամ և շաբաթ որը 8 ժամ,  
ընդամենը 58 ժամ: (շաբաթ որը աշխատանքը  
յերկու ժամ շուտ պիտի վերջանա մյուս որե-  
րից): Ահա այդ 58 ժամը բատրակը պիտի աշ-

խառնի շաբաթվակա ընթացքում։ Բայց նա կարող ե մի որևէ տղիսատել 7-8 ժամ, մի ուրիշ որ 10-11 ժամ։

Կայուն բանվորական որ կամ միջին բանվորական որ սահմանելու հետ միասին աշխատանքի պայմանագրում պետք ե զրել նաև արտաժամյա աշխատանքների վարձատրության կարդը։ այսինքն՝ յերբ բատրակը վորոշված ժամերից ավելի յե աշխատում։ Այդ դեպքում ել պիտի նկատի ունենալ, վոր կուլտակալին—արդյուն բերական տիպի գյուղացիական տնտեսություններում արտաժամյա աշխատանքները վարձատրվում են համաձայն Աշխատանքի Ռենսգրքի 60-րդ հոդվածի—առաջին յերկու արտաժամյա աշխատած ժամերը մեկուկես չափով, իսկ հետեւյալ արտաժամյա աշխատած ժամերը կրկնակի չափով։ Իսկ այն դյուղացիական տնտեսություններում, վորոնց վրա «Ժամանակավոր կանոններն» են տարածվում, արտաժամյա աշխատանքների վարձատրության չափը վորոշվում ե միայն յերկու կողմերի համաձայնությամբ։

Ընդհանուրապես սիզին բանվորական որը 10 ժամից ավելի չպետք ե վորոշել, վորովինետ և 10 ժամյա միջին բանվորական որ լինելու դեպքում յերբեմն կարելի յե աշխատել 10 ժամից

ավելի, յերբեմն ել, յերբ գործը թույլ ե տալիս, կարելի յե 10 ժամից պակաս աշխատել։ Միջին բանվորական որ սահմանել կարելի յե նաև արդյունաբերական տիպի զյուղացիական տնտեսություններում։

Յերբ աշխատանքի պայմանագրով վորոշվում ե Արջին բանվորական որը, պետք ե նրա նշանակությունը բացատրել ինչպես բատրակին, նույնպես և վարձողին։

Յերբ աշխատանքի պայմանագրում խոսվում ե բատրակի կամ բատրակունու աշխատանքի որվա տևողության մասին, պետք ե հաշվի առնել, վոր բատրակն ու վարձողը ժամացույցով չպիտի ստուգեն ժամանակը։ Եատ դեպքերում դա չի լինելու հենց նրա համար, վոր հաճախ վոչ բատրակը և վոչ ել վարձողը ժամացույց չեն ունենում։

### Հանգստի ուերբ

«Ժամանակավ ը կանոնները» պարտավորեցնում են վարձողներին իրենց մոտ աշխատող բատրակներին ու բատրակուներին շաբաթական մեկ որ հանդիսատ առլ։ Սովորաբար հանդստի որերը լինում են տօն որերը—ոռուսական (մեզ մոտ հայկական) գյուղերում կիրակի որերը, իսկ թուրքական գյուղերում՝ ուրբաթ որերը։

Առվորաբար պայման կնքելիս շարաթական մեկ անգամ հանգստի որ տալու հարցի մասին տարածայնություններ չեն լինում:

Բացի այդ, վարձողները պարտավոր են իրենց բատրակներին ու բատրակուհիներին աշխատանքից ազատել նաև որենքով սահմանված տոն որերին:

Յեթե առանձնապես անհրաժեշտ ե այս կամ այն աշխատանքը կատարել շաբաթվա հանգստի որերին, կամ տոն որերին, վարձողը կարող է վարձվողին աշխատանքի դնել միայն նրա համաձայնությամբ և այն ել ոյն պայմանով, վոր վարձողն ինքն ել այդ նույն բրը մասնակցի աշխատանքին:

Այդ դեպքում ել վարձողը պարտավոր է մի ուրիշ ազատ որ տալ վարձվողին կամ նրան հատուկ վճար տալ այդ որվա համար, այն չափով, վոր վորոշվում ե վարձողի հետ համաձայնության գալով:

Շատ հաճախ տոն որերի աշխատանքի վարձը վճարելու հարցը վեճեր ե առաջացնում: Այդ բոլոր վեճերը սովորաբար առաջանում են այն դեպքում, յերբ աշխատանքի պայմանագրում չի նշանակված, թե այդ որերի աշխատանքի համար ինչ չափով պիտի վարձատրվի: Այդպիսի վեճերից խուսափելու համար պետք ե աշխատանքի

պայմանագրում վորոշել տոն որերի աշխատավարձի չափը: Ըստ վորում պետք է հիշել, վոր տոն և հանգստի որերը աշխատավարձի չափը նույնպես վորոշվում է կողմերի համաձայնությամբ: Արդյունաբերական տիպի տնտեսություններում տոն որերի աշխատավարձը վճարվում է Աշխատանքի նրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն, այսինքն՝ կրկնակի չափով:

Սոցիալական ապահովագրությունն ու վարձողի պարականությունները քառակի կամ քառակութուի հիվանդության դեպքում

Գյուղացիական տնտեսություններում սմանդակ վարձու աշխատանք գործադրելու մասին հրատարակված «Ժամանակավոր կանոններ»-ը քատրակների ու քատրակունիների պարագիր սոցիալական ապահովագրում են սահմանում միայն արդյունաբերական կուլակային հարուստ տնտեսություններում: Ըստ «Ժամանակավոր կանոնների» գյուղացիական միջակ տնտեսությունները իրենց մոտ աշխատող քատրակներին ու քատրակունիներին կարող են ապահովագրել միայն կամավոր կերպով - իրենց ցանկությամբ: Մոռավորապես նույնպիսի կարգ է նախատեսնում քատրակության սոցիալական ապահովագրության որենքի նախագիծը, վորը Աշխատանքի

Ժողովրդական Կոմիսարիատը ներկայացրել ե  
ԽՍՀՄ-ի ժողովրդական Կոմիսարների Խորհրդին  
ի հաստատություն\*):

Այսպիսով գյուղացիական անտեսությունների զգալի մեծամասնությունը, նույնիսկ ճնշող մեծամասնությունը բառ որենքի պարտավոր չի ապահովագրել իր վարձած բատրակներին ու բառակունիներին։ Բայց սա դեռ չի նշանակում, թե նրանք բոլորովին չպիտի ապահովագրվեն։

Ընդհակառակն, կարելի յե յենթադրել, վորությունով պարտադիր սոցիալական ապահովագրությունից ազատված գյուղացիական տեսաւորքը մասը կամավոր կերպով կապահովագրեն իրենց բատրակներին ու բատրակունիներին, վորովնետև նրանց համար ավելի ձեռնուր յե ամսական մի քանի կոպեկ վճարել ապահովագրական գանձարկղին իրենց բատրակի կամ բատրակունու համար, քան թե հիվանդացած բատրակին կամ բատրակունուն յերկուսից —

\*.) Այս գրքի սուսերեն բնագիրը հրատարակվել է 1927 թվին։ Այժմ արդեն բատրակության սոց. ապահովագրության որենքը հրատարակվել է և այդ որենքում հենց այդպես ել առված է, վոր միջակ տընտեսությունների համար բատրակների սոցիալական ապահովագրությունը կամավոր է։

չորս շաբաթ շարունակ աշխատավարձ վճարել:  
 Յեթե բատրակի աշխատավարձը ամսական 15  
 ռուբլի լինի, նրա ապահովագրական մուծումը  
 կամավոր ապահովագրության դեպքում կլինի  
 ամսական 45 կոպեկ: Բացի այդ, յեթե բատրակն  
 աշխատանքի ժամանակ հաշմանդամ դառնա կամ  
 հաշմության հետևանքով սեռնի, վարձողը պար-  
 տավոր ե հաշմանդամին կամ նրա ընտանիքին  
 վճարել հատուկ վարձատրություն (վորի չափը  
 վորոշում ե ժողովրդական դատարանը): Իսկ  
 յեթե բատրակը ապահովագրված լինի վարձողի  
 կողսից. այդ դեպքում վարձողն ազատում ե  
 այդ վարձատրությունը տալուց: Այդ դեպքում  
 տուժողին կամ նրա ընտանիքին այդ վարձա-  
 տրությունը տալիս ե ապահովագրական գտնա-  
 արկղը:

Բատրակին ու բատրակունուն ել ձեռնառ  
 յե ապահով գրված լինել, վորովհետեւ այդ դեպ-  
 քում նրանք հույս կունենան, վոր հիվանդացած  
 ժամանակ ավելի յօրկար ժաման ակով ապահո-  
 վագրված կլինեն և ապահովագրական ուրիշ ոգ-  
 նություններ ել կոտանան:

Այս բոլորից պարզ ե, վոր անկառկած, կա-  
 մավոր ապահովագրությունը լայն տարածում է  
 դնենալու:

Ի հարկե, կամավոր ապահովագրման լայն

տարածման ամենալավ միջոցը պայմանագրային տեխատանի նիւս կազմակերպումն է:

Յերբ աշխատանքի պայմանագրի եւ կնքվում այն գյուղացիների հետ, վորոնց վրա չի տարածվում պարտադիր սոցիալական ապահովագրությունը, պետք եւ աշխատել նրանցից համաձայնություն ստանալ կամավոր կերպով ապահովագրելու մասին և նրանց վերցրած պարտավորությունը մտցնել աշխատանքի պայմանագրի մեջ:

Յեթե վարձողը հրաժարվի ապահովագրել բատրակին կամ բատրակուհուն, պետք եւ աշխատել «Աշխատանքի պայմանագրով» յերկարացնել այն ժամանակամիջոցը, վորի ընթացքում վարձողը պարտավոր երատրակի կամ բատրակուհու հիվանդության դեպքում աշխատավորձ վճարել և բնակարան ու սնունդ տալ հիվանդին: Հիվանդին սնունդ ու բնակարան տալուն պիտի համաձայնեցնել նույնիսկ այն դեպքում, յերբ վարձողը ապահովագրի վարձվողին: Վերջին դեպքում ել ու անհրաժեշտ եւ վորովինետե, հակառակ դեպքում հիվանդ բատրակը կամ բատրակուհին կարող եւ մնալ առանց բնակարանի՝ ու մնունդի:

Բացի այդ, որենքը պարտավորեցնում եւ վարձողին՝ հիվանդացած բատրակին կամ բատ-

բակուհուն տանել հիվանդանոց, բժշկակայան և  
կամ բժշկին հրավիրել հիվանդի մոտ:

Աշխատանքի պայմանուգրում պետք է ցույց  
տալ, թե վոր հիվանդանոցը կամ վոր բուժակա-  
յանը պիտի տարվի հիվանդ բառ բակը կամ բատ-  
րակուհին, վորպեսզի հենց սկզբից բատրակն  
իմանա թե իրեն վորտեղ են տանելու բժշկվե-  
լու, իսկ վարձողն իմանա իր պարտականություն-  
ները բատրակի կամ բատէ ակուհու հիվանդու-  
թյան դեպքում:

Վարձողը հիվանդին հիվանդանոց կամ բու-  
ժակաբան տանելուց չի ազատվում նույնիսկ այն  
դեպքում, յերբ բատրակը կամ բատրակուհին  
ապահովագրված լինեն:

### Թրնակման կարգը

Վարձողը կարող է բատրակին կամ բատ-  
րակուհուն արձակել պայմանագորված ժամանա-  
կից շուտ, բայց զըս համար պետք է հարզելի  
պատճառ լինի («Ժամանակավոր կանոնների»  
17 հոդվ.): Սակայն յեթե բատրակը համաձայն  
չե իր արձակման պատճառի հետ, ապա նա կտ-  
րող է վեճ սկսել և գործը տալ հաշտարար  
հանձնաժողովին քննելու, իսկ յեթե ալզտեղ հա-  
մաձայնության չեկան, կարող է գործը փախա-  
զրել ժող. դատարանու

Ժամանակից առաջ արձակելու դեպքում  
 վարձողը պարտավոր ե բատրակին կամ բատ-  
 րակունուն նախազգուշացնել արձակման որից  
 յերկու շաբաթ առաջ իսկ յեթե արձակում ե  
 առանց նախազգուշացնելու, պետք ե արձակվո-  
 ղին վճարի յերկու շաբաթվա աշխատավարձի  
 չափով։ Որենքը պարտավորեցնում ե վարձողին՝  
 առանց նախազգուշացնելու բատրակի արձակե-  
 լու դեպքում յերկու շաբաթվա աշխատավարձ  
 տալ, վորպեսզի նա այդ ժամանակամիջոցում իր  
 համար նոր գործ գտնի։ Սակայն ով չգիտի, վոր  
 ժամանականդ ձմեռվու պարագ շրջանում դժվար ե  
 բատրակի կամ բատրակունու համար յերկու շա-  
 բաթում գործ ճարել իր համար։ Վորպեսզի ար-  
 ձակելու դեպքում բատրակը կամ բատրակունին  
 նոր աշխատանք գտնելու համար ավելի յերկար  
 ժամանակ ունենան, պետք ե աշխատանքի պայմա-  
 նագրով վարձողին համաձայնեցնել, վոր արձակ-  
 ման նպաստն ավելի յերկար ժամանակի հա-  
 մար տա, կամ թե ավելի շուտ հայտնի բատ-  
 րակին արձակելու մասին։

Են, փոխհատուցում ե առաջ վարձողը վարձվողին,  
 յերե վարձելու մասին համաձայնուրյան գալուց  
 հետ վարձողը հրաժարվում ե աօլատանք առ  
 բատրակին

Բատրակների կյանքում հաճախ ե պատա-  
 հում, վոր վարձողը վարձելու մասին համաձայ-

նության գալուց հետո հրաժարվում է իր խոսքից և վարձում է մի ուրիշին։ Այսպիսի գեղքեր ավելի շատ պատճում են այն ժամանակ, յերբ բատրակին վարձում են վոչ թե աշխատանքների սկզբին, այլ մեկ, յերկու կամ միքանի ամիս առաջ։ Աշխատանքի մասին պայմանագործած բատրակը կամ բատրակունքին հանդիսաւ սպասում են, թե յերբ կակավին աշխատանքները, բայց յերբ գալիս են աշխատանքի, բանից դուրս ե գալիս վոր արդեն ուրիշներն են աշխատում իրենց տեղը։ Հաճախ այդպիսի գեղքերում վարձվելու ժամանակն արդեն բատրակը կորցրած է լինում, վորովհետեւ սովորաբար բոլոր գյուղացիները նախորոք պայմանավորվում են իրենց բատրակների հետ։ Այսպիսով բատրակն ստիպված է լինում մնալ առանց աշխատանքի ու աշխատավարձի։ Բատրակների կյանքում սրանից ել վատ դրությունն լինել չի կարող։ Նա ստիպված է լինում քաղցած սպասել, մինչև մի առիթ լինի նորից վարձվելու։

Այսպիսի գեղքերից խուսափելու համար աշխատանքի պայմանագրում անպատճառ պետք է գրել, վոր յեթե այդ ձեռվ վարձողը հրաժարվի իր խոսքից, բատրակին կամ բատրակունքի վորշ գումար վճարի, իսկ յեթե բատրակը աշխատանքի տեղը գնալու ծախսեր է արել, վճարի

նաև այդ ճանապարհածախսը։ Յեթե աշխատանքի պայմանագրում գրված լինի այդ վարձատրության մասին, այն ժամանակ վարձողը իր խոսքից հրաժարվելուց առաջ լավ կմտածի և կտեսնի, վոր դա վնաս ե իրեն ու այդ քայլը չի տնի։ Իսկ յեթե այդ մասին պայմանագրում գրված չլինի, նա հեշտությամբ կհրաժարվի իր ողարմանց, ճենց վոր ավելի եժան գնով մի բատրակ կամ բատրակունի գտնի։

#### Անչափահասների առխատանքի պայմանները

Անչափահասների ու փոքրահասակների համար տշխատանքի պայմանագիրը կնքելիս պետք է նկատի առնել հետևյալ պայմանները։

1) Անչափահասներին ու փոքրահասակներին չպիտի ուղարկեն ուժից վեր և նրանց առողջությունը վնասող աշխատանքների, որինակ՝ ծանրություններ փոխադրելու, սեքենաներով աշխատելու և այլն։

2) Պետք ե աշխատել, վոր անչափահասների ու փոքրահասաների բանվորական որը ավելի պակաս լինի չափահասներից։ Մասսավա՞գ, չերբ ընդունվում ե յերկարացրած բանվորական որ։

3) Պայմանագրում հիշել, վոր անչափահասներն ու փոքրահասակները իրավունք ունեն վո-

բոշ ժամերին գնալ դպրոց, դասընթացքներ և  
այլ լուսավորական հիմնարկներ:

Վարձողը միությանն ինչպիսի տոկոսեր և զնարում,  
կապված աշխատ պայմանագրի հետ

Վարձողի՝ միությանը տալիք տոկոսների  
հարցը վորոշելիս պետք է ղեկավարվել նրանով,  
վոր այդ հատկացումների չափը պիտի վորոշվի:  
Վարձողի հետ համաձայնություն գալով, համա-  
ձայն նրա անտեսության կարողության: Մյու-  
րյանը տոկոսից տարոց բոլորին պիտի ա-  
զատվեն այն գյուղացիական տեսառյունները,  
վորոնիք բատրակ կամ բատրակունի յեն վարձում  
կարիքից սիափած, բնակչությունուն աշխատող  
ներք չունենալու պատճառով (այրիների, ան-  
չափունա վորքերի, կարմիր բանակայինների  
բնակչությունները):

Միությանը տոկոսներ տալուց պետք է ա-  
զատել նաև այն անտեսություններին, վորոնը  
բատրակ կամ բատրակունի յեն վարձում մի-  
միայն կարճ ժամանակամիջոցով, այսինքն այն-  
տնտեսություններին, վորոնք որենքով աղատ-  
վում են գրավոր պայմանագիր կնքելու պար-  
տականությունից:

Միությանը տալիք տոկոսների չափը կա-  
րող է վորոշվել վոչ ավել 2 տոկոս այն դրամա-

մթերքով աշխատավարձի ընդհանուր գումարի, վոր գրվում եւ աշխ. պայմանագրում— այսինքն յուրաքանչյուր ոռւբլուն 2 կոպեկ։ Այդ հատկացման չափը աշխ. պայմանագրում պիտի գրվի վոչ թե տոկոսներով, այլ ոռւրիներով ու կոպեկներով։

Վորովհեան լինում են դեպքեր, վոր վարձողները չեն հասկանում, թե ինչի համար են նրանք վորոշ տոկոսներ տալիս միությանը, դրա համար ել աշխատանքի պարմանագրեր կնքելիս ողեար եւ վարձողներին բացատրել, թե ինչ նպատակներով եւ միությունը տոկոսներ վերցնում նրանցից։

Որինակ՝ մի զյուղացի գրում եւ «Արհեստակցական միությունը պաշտպանում եւ վոչ թե մեզ, այլ բատրակներին, թող նրանցից ել տոկոսային հատկացումներ սահնաւ ինչնու յի այսպես զրում այդ զյուղացին։— Վորովհեան նա չի հասկանում և վոչ վոք ել չի հասկացըրել, վոր միության միջոցով աշխատանքի պայմանագիր կնքելով՝ վարձողը աղոտվում է մի շարք ծախուերից, վոր նա պիտի վճարեր յէթե պայմանագիր կնքեր առանց միության։

Միությունը ձրի տալիս եւ աշխատանքի պայմանագրի թերթիկները, ինքը գրում եւ աշխատանքի պայմանագիրը և կատարում եւ տո-

մարագրել տալու բոլոր պարտականությունները՝  
Միությունը ոժանդակում ե, վոր շուտ լուծվեն  
վարձողի ու բատրակի միջև ծագած վեճերը,  
դրա համար միությունն ուղարկում ե իր ներ-  
կայացուցիչներին կամ հաշտարար հանձնաժո-  
ղովներ։ Այս ամենը միությունից ծախս ե պա-  
հանջում։ Ել ինչու պետք ե միմիայն բատրակ-  
ների ու նրանց միության վրա ընկնեն այն  
ծախսերը, վոր կապված են աշխ. պայմանագրի  
հետ, ինչու պետք ե վարձողն ազատ լինի այդ  
ծախսերից։ Չե վոր բատրակն արդեն միությանը  
վճարում ե իր անդամակցական տոկոսները, ի՞նչ  
ե, բատրակի վիզը համատ ե վարձողի վզից։ Վար-  
ձողին շատ լավ պիտի հասկացնել, վոր պայմա-  
նագրի հետ կապված տոկոսները, վոր տալիս ե  
միությանը, դա վոչ թե հարկ ե բատրակի կամ  
միության ոգտին, այլ միայն այն ծախսերի մի-  
մասն ե, վոր կառարվում ե պայմանագիրը կըն-  
քեյու, կյանքում իրականացնելու համար և առա-  
ել այն մասն ե, վոր պետք ե վճարի վոչ թե  
բատրակը, այլ վարձողը։

Ինչպես են վորոօփում այն պայմանները, վոր հա-  
յատեանված չեն պայմանագրում

Աշխատանքի պայմանագրում անպատճառ  
պետք ե դրված լինի, թե ինչ որենքով են

վճռվելու սյն պայմանները, վոր նախատեսնված չեն պայմանագրում։ Դա պետք է գրվի նրա համար, վորովհետեւ վարձու աշխատանքի պայմանները սիատեսակ չեն վորոշվում բոլոր տնտեսություններում, վորտեղ բատրակ կա և աշխատայմանագիր ե կնքվում։ Մի դեպքում նրանք վորոշվում են գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանք ոգտագործելու մասին հրատարակված «Ժամանակավոր կանոններով», իսկ մի ուրիշ դեպքում «Աշխատանքի Որենսգրքով»։

Յեթե բատրակի կամ բատրակուհու համար աշխատանքի պայմանագիր ե կնքվում սիջտեկ կամ սակագուժ տնտեսության հետ, վորի վրա տարածվում են «Ժամանակավոր կանոնները», ապա աշխատանքի պայմանագրումն ել պիտի գրել, վոր չնախատեսնված բոլոր պայմանները վորոշվում են «Ժամանակավոր կանոններով»։ Իսկ յեթե վարձողը արդյունաբերական տիպի գյուղացիական տնտեսություն ե, — աշխատանքի պայմանագրում պետք է գրել, վոր բոլոր չնախատեսնված պայմանները վորոշվում են «Աշխատանքի Որենսգրքով»։

---

## ԻՆՉՊԵՍ ԱՆԵԼ, ՎՈՐ ՎԱՐՁՈՂԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Մենք արդեն տեսանք, թե արհեստակցական միությունն ինչպես ե ոգնում բատրակին և բատրակունուն աշխ. պայմանագիր կնքելիս:

Սակայն բավտկան չի ոգնել, վոր բատրակ—բատրակունիները լավ պայմանագիր կնքեն վարձողի հետ, հարկավոր ե նուև ոգնել, վոր առաջնատանքի պայմանագիրը իրականացվի կանքում: Իսկ զա հաճախ ավելի զժվար ե լինում, քան թե վարձողի հետ համաձայնության գալը և նրա հետ աշխատանքի պայմանագիր կնքելը: Ովքեր կարգում են, «Բատրակ» թերթը, նրանք պիտին, թե ինչպես հաճախ բատրակներն ու բատրակունիները գանգռավում են. թե վարձողները չեն կատարում աշխատանքի պայմանագրի կետերը: Այդպիսի գեոլքեր ամենից շատ պատճենում են բատրակի կամ բատրակունու հետ վերջնական հաշիվը մաքրելու ժամանակ: Մինչև հաշիվը մաքրելու որը, երբ վարձողը շահագրգռված է, վոր բատրակին պահի իր մոտ, իր աշխատանքի համար, կարծես թե ամեն ինչ լով և գնում: Հաճախ նույնիսկ—խորամանկ

վարձողը՝ խոսանում եւ բատրակին կամ բատրակուհուն մի բան ել ավելի տալ պայմանագրում պրվածից։ Բայց հաշիվը փակելու ժամանակ բոլորովին հակառակն եւ դուրս գալիս, վարձողը խարսն եւ և չի մճարում նույնիսկ այն, ինչ վոր պայմանագրով հասնում եւ։

Ե՞նչ պիտի անել, վորախազի վարձողն իւրաքարծի աշխատանիքի պայմանագիրը։

Յերբ վարձողը աշխ. պայմանագիրը չի կատարում, բատրակ՝ բատրակուհիները պետք են դիմում արնեսակցական միությանը, կամ աշխատանիքի տեսչին, յեթե մոտիկ եւ աշխատանքի տեսուչը։ Միությունը միշտ ել կարող եւ ստիպել վարձողին, վոր նա կատարի իր պարտականությունները, վոր հանձն եւ առել աշխ. պարմանագրով։ Իսկ յեթե վարձողը չլսի միությանը, այդ դեպքում միությունը կարող եւ գործը հանձնել հաշարաբ հանձնաժողովին կամ թե ժողոտատրան։

Արհեստակցական միությունը պետք եռոգնի բատրակին կամ բատրակուհուն, յերբ վարձողը չի կատարում աշխատանքի պայմանագրի կետերը։ և այդ վոչ միայն այն դեպքում, յերբ բատրակ՝ բատրակուհին կդիմեն միությանը, այլ և ինքը՝ միությունը իր ներկայացուցիչների միջոցով պետք եւ շարունակ իսկի ու հետեւ, թե

վարձողներն ինչպես են կատարում աշխատանքի պայմանագիրը:

Միության ներկայացուցիչները, փորոնք աշխ. պայմանագրեր են կնքում, պետք ե ժամանակ առ ժամանակ ստուգեն, վոր վարձողներն իրականացնեն պայմանագրի կետերը: Այդպիսի ստուգումներ պետք ե կատարել մանավանդ ամտուային սեղմնի վերջերին, իբրև ամեն տեղ վարձողներն սկսում են հաշիվը փակել բատրակների հետ:

Հնդհանրապես առանց ստուգման չպիտի մնա և վոչ մի պայմանագիր, վոր կնքված ե միության մասնակցությամբ: Միության ներկայացուցիչները պետք ե ամեն մի պարմանագիր ստուգեն, վոր վարձողը կատարի իր պարտականությունները:

Արհեստակցական միությունը պետք ե խոսի գյուղ. աշխատանքի տեսչի հետ, վոր նա, վորքան հնարավոր ե, հաճախ անցնի գյուղերը և ստուգի, թե վարձողներն ինչպես են կատարում պայմանագրերը:

Վորպեսզի ափելի լավ կազմակերպված վենի աշխ. պայմանագրերի կատարման ստուգումը, պետք ե այդ աշխատանքի մեջ քաշել նաև գյուղբատկումներին և նրանց աշխատանքի պաշտպանության հանձնաժողովներին: Հյուսիսային կող-

կասի և մի շարք ուրիշ տեղերի վորձը ցուց ե  
տվել, վոր աշխ. պաշտպանության հանձնաժո-  
ղովները այս գործում շատ բան կարող են անել:  
Այդ հանձնաժողովի անդամ բատրակ բատրա-  
կուհիները մեծ ուշադրություն են դարձնուե  
աշխատանքի պայմանագիրը իրականացնելու  
դործին: Վորտեղ աշխ. պաշտպանության հանձ-  
նաժողովներն աշխատում են, այն տեղ, հենց  
նրանց այդ աշխատանքի շնորհիվ ել այդ հանձ-  
նաժողովի անդամները մեծ հեղինակություն են  
վայելում բատրակության մեջ: Աշխատանքի  
պաշտպանության հանձնաժողովները լիրք ստու-  
գում են, թե վարձողներն ինչպես են կատարում  
աշխ. պայմանագիրը, դրանով նրանք ոգնում են  
նաև աշխատանքի տեսչությանը: Նրանց միջո-  
ցով աշխատանքի տեսուչը կարող ե խմանալ  
վարձու աշխատանքի որենքների խախտման  
դեպքերը և աշխատանքի պայմանագրերը չկա-  
տարողների մասին: Իսկ զա զգալի չափով կթե-  
թեացնի նրանց աշխատանքը:

Աշխատանքի պահպանության նաևն աժո-  
ղովները ստուգում են վոչ միայն այն աշխ.  
պայմանագրերի կատարումը, վոր կնիվել են  
միտքյան մասնակցությամբ, այլ յեվ այն, վոր  
կնիվել են առանց միտքյան: Այդ աշխ. պայ-  
մանագրերի մասին նրանք տեղեկություն են

ստանում զլուղխորհրդում, վրտեղ տոմարագրվում են բոլոր աշխ. պայմանագրերը: Յերբ ստուգում են այն պայմանագրերի կատարումը, վոր կնքվել են առանց միության մասնակցություն, պետք եւ ստուգել վոչ միայն պայմանագրի կատարման փաստը, այլ և այն, թե վորքան ճիշտ են կազմած այդ պայմանագրերը: Քիչ չի պատահում, վոր այզպիսի աշխ. պայմանագրերը կազմված են լինում անորինական ձևով: Յեզ դա լինում եւ այն պատճառով, վոր այդ պայմանագրերը կազմում են աշխատանքի որենքները չիւ ացող մարդիկ: Բայց պատահում եւ նաև, վոր վարձողը ոգտվելով բատրակի կամ բատրակունու անգիտակից լինելուց, առանց միության պայմանագրի կնքելիո հաշվի չի առնում որենքը և պայմանագրի կազմում եւ իր ոգտին:


## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Ինչ է բարտելի աօխատանքային պայմանագիրը յեվ ինչպես կներև այն . . . . .	3
1. Աշխատանքային պայմանագիրը բառ- բակի ու բատրակունու զրությունը չպիտի վատացնի որենքում նախա- տեսնված պայմաններից . . . . .	5
2. Ինչ գեղքում պիտի աշխատանքի պայ- մանագրում ավելի լավ պայմաններ մշակել, քան թե որենքումն և նախա- տեսնված . . . . .	9
3. Ժամանակավոր կանոնները և Աշխա- տանքի Արենսգիրքը . . . . .	11
Ինչու ավելի լավ է աօխատանքի պայմանագի- րը կներև միուրյան միջոցով . . . . .	16
Բարտեկների ու բարեկուեիների առենսակ- ցական միուրյունն ինչպես և ոգնում նրանց աօխատանք. պայմանագիր կնելիս	19
Միուրյան ներկայացուցիչներն ինչպես ևն կնում բարտեկների աօխատանքային պայ- մանագիրը . . . . .	22

Ինչ լեզվ ինչպես պետք է հիշատակել աշխատան-	
թի պայմանագրերում . . . . .	30
1. Վարձելու ժամանակամիջոցը . . . . .	33
2. Վարձվողի պարտականությունները . . . . .	37
3. Աշխատավարձը . . . . .	38
4. Աշխատավարձը վճարելու կարգը . . . . .	47
5. Բնակարան, սնունդ, հագուստ և կոշիկ	48
6. Բանվորական որը . . . . .	54
7. Հանդստի որերը . . . . .	58
8. Սոցիալական ապահովագրությունն ու	
վարձողի պարտականությունները բատ-	
րակի կամ բատրակունու հիվանդու-	
թյան դեպքում . . . . .	60
9. Արձակման կարգը . . . . .	64.
10. Ինչ փոխհատուցում և տալու վարձողը	
վարձվողին, յեթե վարձելու մասին	
համաձայնության գալուց հետո վար-	
ձողը հրաժարվում և աշխատանք տալ	
բատրակին . . . . .	65
11. Անչափահանների աշխատանքի պայ-	
մաններ . . . . .	67
12. Վարձողը միությանն ինչպիսի տոկոս-	
ներ և վճարում կարված աշխատան-	
քային պայմանագրի հետ . . . . .	68
13. Ինչպես են վորոշվում այն պայմաննե-	
րը, վոր նախատեսնված չեն պայմա-	
նագրում . . . . .	70
Ինչպես անել, վոր վարձողը իրականացնի ա-	
խատանքի պայմանագիրը . . . . .	72

111-11274  
• 93894




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Օրադ.



FL0039639

(164)



ԳԻՒՆ Ե 15 Կ.



